

ՀԱՅԿ

#1(60)
2020

ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ
ՏՈՒՆՈՒԹՅԱՆ

Երևան / Yerevan



ՀԱՅԿ 5 ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ





Աճաքես

Հաշաասանի Հանրապետության հաադոս քաղաքացուն վաշել մոտեցուն



մարտեթինգ • հրասարակչություն • սպազություն • ադունոն նյություն



Ա ար ժամանակ, երբ երգերը կարելի էր շոշափել: Ճիշտ է, վիճիլն արդեն պատմություն էր (ժամանակավոր), իսկ լրագրային սկավառակները դեռ նոր էին սողոսկում մեր հետսովետական կողմերը: Եվ ահա այդ ժամանակներում դեռևս ամենամրցունակ կրիչը տարատեսակ ձայների համար ժապավենային կասետն էր: Բացի հարմար չափերից կասետն ուներ ինտերակտիվ հատկություն. նրա վրա կարելի էր նոր երգեր ձայնագրել: Որտեղից: Ռադիոյից: Պատում էիր մագնիտոֆոնի կլոր պլեփոփիչը ու խշշոցների միջով զննում այն մի քանի ալիքները, որտեղ խոսում էին ու երգեր միացնում, երբեմն էլ ընդունում պատվերներ ունկնդիրներից: Ցանկալի էր մագնիտոֆոնի զոնե մեկ կասետադարանում ունենալ մեկ դատարկ ժապավեն՝ պատրաստ ամեն պահի ձայնագրման. լսում էիր ծանոթ լավ երգի առաջին ակորդներն ու սեղմում ոեքը: Ժամանակ առ ժամանակ կարելի էր միանալ պատվերով ծրագրերին ու պատվիրել վաղուց սպասված, բայց անհասանելի թվացող երգը (ու ձայնագրել, իհարկե): Ու այն ժամանակ թվում էր, թե այդ մոգական ռադիոստուդիաներում աշխատելն ամենաերանելի բանն էր՝ անսահմանափակ երաժշտություն, ճաշակը հազարավոր մարդկանց թելադրելու սուպեր ունակություն:

Բայց այդ ժամանակ արդեն սկսվել էր սրըթնաց փոփոխվող ժամանակների փուլը: Ընդամենը մի քանի տարի անց վրա հասավ համացանցը, որտեղ միախառնվել են ու մինչ օրս շարունակում են խառնվել ռադիոն, հեռուստատեսությունն ու բոլորովին նոր երևույթներ: Օրինակ, հիմա կարելի է սեփական ռադիոն վարել՝ առանց միջորդների, հենց էսպես, միանգամից հասցնել անսահմանափակ քանակությամբ մարդկանց:

Ինչպե՞ս, բա ստուդիան, բա ՖՄ-ը, բա ունկնդիրները... Դե, ստուդիայի փոխարեն կա խոսափողով հեռախոսն ու տարատեսակ ծրագրեր մոնտաժի համար, ՖՄ-ի փոխարեն կան բազմաթիվ հարթակներ՝ նախատեսված հատուկ ձայնային հաղորդումների սպասարկման համար, իսկ ունկնդիրներն ինտերնետում են: Պարզապես այս ամենը կոչվում է փոքրասթ: Եվ Հայաստանում հենց հիմա, երբ դուք թերթում եք մեր ամսագրի այս համարը, փոքրասթների իրական բումի առաջին ալիքն է: Մարդիկ, ովքեր ասելիք ունեն, ովքեր ուզում են բառացիորեն լսել ինձ, ովքեր ուզում են կիսել մարդկության հետ իրենց սիրելի երգերը կամ պատմել իրենց սիրելի ֆիլմերի մասին, նրանք վերցնում են ձայնագրիչն ու ստեղծում հայալեզու փոքրասթներ:

Ոլորտը Հայաստանում դեռ նոր է ձևավորվում, դեռևս շատ են փորձարկումներն ու որոնումները, բայց շատ են նաև ունկնդիրները, ովքեր հեռախոսներն ու ականջակալները պատրաստ պահած սպասում են հայալեզու ձայնային բովանդակության: Գրանցվում են մի քանի քո սիրելի փոքրասթներին, քաշում նոր թողարկումները, միացնում ու ստանում քո սեփական իդեալական ռադիոն:

Երևանը լսում է:

Դե, մենք էլ մեզ ծանոթ հիմն տպագիր ձևով պատմում ենք այդ ամենի մասին:

(Զէ, մի ըրալե. ԵՐԵՎԱՆԻ էլ ունի փոքրասթ, այնպես որ մենք նաև խոսում ենք այս ամենի մասին):

Գլխավոր խմբագիր
Արտավազը Եղիազարյան

ԼՍՈՒՄ ԵՒ ԵՐԵՎԱՆԸ

04 Ուղեցույց
Հնագույն մեդիայի վերածնունդը
Եթե չգիտեք, թե ինչ է փող-
խաթը և ինչպես են դրա-
նից օգտվում, խնդիր չէ, հի-
մա ամեն ինչ կբացատրենք:



06 Ոչ վաղ անցյալ
Հայոց փողքաթինգի պատմություն
Ինչպես Հայաստանում իրա-
րիկ անկախ հայտնվեցին
առաջին փողքաթերները,
իսկ հետո այն բերեց
իսկական բուրի:



10 Խոշոր պլան
Լսե՛ք մեզ հիմա
Մեդիա նախաձեռնու-
թյունների կենտրոնի
«Լսիր ինչ հիմա» ծրագրի
մասնակիցներն ու իրենց
փողքաթերները:



16 Հետնաբեմ
Կրքոտ սեր առ Հայնն ու պատումը
Ինչպես է սրեղծվում
փողքաթը. «Սկանզոդի»
մի էսիվոդի օրինակով ու
սեփական խոսքերով:

18 Այլընտրանք
Մեդիան բարձրացնում է Հայնը
Ինչու են ափսոսանքներ
ընկալվում փողքաթերում
փողքաթային ձևաչափը:

20 Պրոֆի
Օդի տատանումներ
Փողքաթեր և հնչու-
նային ռեժիսոր Լայ
Խաչատրյանը բացատրում
է չայնի հետ աշխատելու
նրբությունները:



22 Գրողը տանի
Արի ճերանանք
Արցախագիր և փողքաթեր
Արիի Ոսկանյանի պատմ-
վածքը՝ 2050 թվականից:

26 Խորհուրդ
Լսելը ցրում է վախը
Ջրույցներ Մեդիա նախաձեռ-
նությունների կենտրոնի խորհուր-
դատունների ամերիկայի փող-
քաթու փողքաթերների հետ:

28 Ջուր
Ինչու է աղմկում պուպուկակը
Ինչու է ֆրանսիացի չայնային
արտադր պատրաստվում
սրեղծել երևանյան ցայադ-
բյուրների չայնային խորհուրդ:

30 Իմ Երևան
Երևանն իմ կյանքն է, ինչպես և իմ կյանքը Երևանն է
Հանրային ուղիղի նախկին
դիտերը՝ երևանյան չայների
ու Թավրյա հեղափոխության
սկզբի մասին:

32 Այնտեղ
Օտարախոսները
8 օտարալեզու փողքաթ, որոնք լսելով կհասկանաք, թե ինչ բարձրագույն ու հեղափոխիչ է ողորդը:

36 Արվեստ
Արի բանդակ լսենք
Հարուկ չայներ
վերադարձվելու համար
սրեղծված խանդակները
Երևանում և աշխարհի այլ
խաղաղներում:

40 Պատմություն
Լսեցե՛ք, լսեցե՛ք, խոսում է Երևանի լայնահաղորդ կայանը
Հայկական ուղիղի փառա-
պանծ պատմությունը. ոչ
չայնային հաղորդչից մինչև
անեկրոններ:

44 Կադրերի բաժին
Ռադիո հաղորդումների ծրագիր, ապրիլ 1936 թ.
Մի դրվագ Երևանի չայնային
պատմությունից:



Հապիկ՝
Kolektiv Design Room
ԵՐԵՎԱՆ #1(60) | 2020

Գլխավոր խմբագիր՝
ԱՐՏԱՎԱՋԻ ԵՂԻԱՋԱՐՅԱՆ
Արտ-տնօրեն՝
ՆՈՆԱ ԻՍԱԶԱՆՅԱՆ
Թղթարկող խմբագիր՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Գրական խմբագիր՝
ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Սրբագրիչ՝
ՀԱՍՄԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ
Ֆոտոմշակում՝
ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Էջադրում՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հեղինակներ՝
Մարգարիտ Միրզոյան,
Հասմիկ Բարխուդարյան,
Սամսոն Մարտիրոսյան,
Անահիտ Լազարյան,
Արիի Ոսկանյան, Քնար
Խուրդյան, Սոնյա Արշակյան

Լուսանկարներ և պատկերագրություններ՝
Բիայնա Մահարի, Kolektiv
Design Room, Հանրային
ուղիղի արխիվ, Ալեքսիս
Պոլ, Անահիտ Լազարյան,
Տաթև Հակոբյան

Տառատեսակ
Arek Armenian by Rosetta,
Montserrat Arm հեղինակներ՝
Ջուլիետա Ուլանովսկի,
Վահան Հովհաննիսյան

«Քաղաքի ամսագիր» ՍՊԸ
Տնօրեն՝
Արտավազ Եղիազարյան

Հայաստանի
Հանրապետություն,
0019, Երևան,
Բաղրամյան 49/2
Էլ. փոստ՝
evnmag@gmail.com
Ungwag' evnmag.com

© 2011-2020 «ԵՐԵՎԱՆ»
Գովազդային նյութերի բովանդա-
կության համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:
«ԵՐԵՎԱՆ» ապրանքային նշանի
իրավատեր է հանդիսանում
Արտավազ Եղիազարյանը:
Համարը տպագրության է հանձնվել
26.02.2020
 Տպագրված է Անտարես
տպագրատանը, 0009,
Երևան, Մաշտոցի 50ա/1
Տպաքանակ՝ 4000 օրինակ



Ամսագրի այս համարը տպագրվել է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի «Լսիր ինչ հիմա» Հայաս-
տանում Փողքաթինգի մշակույթի զարգացում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Հայաս-
տանում ԱՄՆ դեսպանատան ֆինանսական աջակցությամբ: Համարում արտահայտված է հեղինակների
դիրքորոշումը, որը կարող է չհամընկնել ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ:

facebook.com/
YerevanCityMagazine

instagram.com/
evnmag

Ամսագիրը ղեկավարվում է «Ջանգվա-
ծային լրատվության մասին» և «Գովազ-
դի մասին» ՀՀ գործող օրենսդրությամբ:
Ամսագրի նյութերը վերատպվում են
միայն իրավասիրող գրավոր համա-
ձայնությամբ: «ԵՐԵՎԱՆ» ամսագրին
հղում կատարելը պարտադիր է:
«ԵՐԵՎԱՆ» ամսագրի ստեղծման
գաղափարը պատկանում է «Երևան
Փողքաթն» ՓԲԸ-ին:



@TheMainDesignStore

TheMain.am

Պուշկինի 28 (Roomz) / Մհեր Մկրտչյան 10



Հնագույն մեդիայի վերածնունդը. Ինչ է փոդկասթինգը

Ռադիոյի վերածնունդը, ժողովրդի պատմության, թվային գովազդի ապագան: Այս և նման սահմանումներով և կանխատեսումներով են ծանազեպները բնութագրում ճայնային պատմութեք րաբածելու նոր րեխնոլոգիան՝ փոդկասթը: Բայց ինչ է դա, այնուամենայնիվ:

Մկենի սկիբիյ՝ րեխնոլոգիա

Փոդկասթինգի տեխնոլոգիան չէր լինի, եթե չլիներ դանդաղ ինտերնետը: 1990-ականներին համացանցը նոր էր ձևավորվում, նույնիսկ ծրագրավորողները վստահ չէին, որ այն երբևէ կարող է մեծ ծավալի ինֆորմացիա փոխանցել՝ որակը չկորցնելով: Ինտերնետ օգտագործողներն էլ էին դժգոհ. վիդեո ներբեռնելն ավելի երկար էր տևում, քան դիտելը: Այս իրավիճակը շտկելու համար ամերիկացի ծրագրավորող Ղեյվ Վայները 2000 թվականին ստեղծեց ֆայլերի նոր տեսակ՝ RSS (Real Simple Syndication) անունով: RSS ֆայլը թույլ է տալիս, որ դրանում նոր հրապարակումներն ավտոմատ հասնեն ֆայլը ներբեռնած օգտատերերին: Իրականում, մինչև 2004-ը փոդկասթներն անվանում էին աուդիոբլոգ: Մինչև լրագրող Բեն Համերսլին The Guardian-ի հետ հարցազրույցում հնարեց փոդկասթ բառը iPod և Broadcast (թարգմանաբար՝ հեռարձակվել) բառերից:

Որտեղ գտնել և լսել փողփասթներ

Տեխնոլոգիայի զարգացման համար կարևոր մյուս կետը 2004 թվականին էր, երբ iTunes-ում ստեղծվեց փողքասթ-ների առաջին դիրեկտորիան, որտեղ հեղինակները ներբեռնում էին իրենց ալիքների RSS-ները՝ դրանք հասանելի դարձնելով iTunes-ից օգտվողներին։ Apple-ի մենաշնորհը հիմա հաղթահարված է. արդեն կան այլ դիրեկտորիաներ և հավելվածներ՝ Google podcasts, Stitcher, TuneIn, Podchaser, Spotify, որոնք ամենահայտնին են և անվճար ներբեռնելի են նաև Android և այլ օպերացիոն համակարգերի համար։ Դրանք թույլ են տալիս ընտրել՝ ինչ ալիքների հետևել. միջին փողքասթ լսողի փլեյլիստում կա ավելի քան 70 ալիքի բաժանորդագրություն։ Փողքասթ հավելվածները թույլ են տալիս արագացնել աուդիոն՝ երկար էպիզոդները լսել արագ՝ ըմբռնելիի սահմաններում։ Ինչ վերաբերում է թրաֆիքի ծախսին, ապա ձայնային ֆայլերը բնավ ծախսատար չեն. Յուբոյն ընկերության մասնագետների հաշվարկներով միջինում փողքասթի մեկ բուպեն կլանում է մոտ 1 ՄԲ, այսինքն սովորական կես ժամ տևողությամբ էպիզոդը կծախսի ընդամենը 30 ՄԲ։

Եվ այնուամենայնիվ, տեխնոլոգիան մնում է փողքասթների ամենաթույլ կողմը։ Մասնավորապես, չկան որոնման համակարգեր։ Հույսը միայն ռեյտինգներն են և ընկերների խորհուրդները։ Ձեր երազանքի փողքասթը գուցե կա, բայց հնարավոր է, որ դուք այն երբեք չհայտնաբերեք։

(Ան)սանձնական բովանդակություն

Առաջին փողքասթները դանդաղ, չմաքագրված, անմիջական լեզվով հաղորդումներ էին, երկար գրույցներ կամ հեղինակի մենախոսություններ՝ նեղ թեմաների շուրջ։ Իսկական ձայնային բլոգներ։ Քանի որ փողքասթային արտադրանքի համար մեծ ռեսուրսներ պետք չեն, հերիք է ընդամենը ցանկություն ունենալ։ Հակառակը, հաճախ ամենահաջողվածները նեղ՝ նիշային, թեմաներով փողքասթներն են՝ արտադրված էստուգիաստների կողմից։ Այս նեղ թեմատիկ ալիքներն ունեն փոքր, բայց շատ հստակ և նվիրված լսարան։

Փողքասթինգով զբաղվելու առաջամարտիկներից էին ամերիկացի լրագրողները՝ հիմնականում Հանրային ռադիոյի փորձով (NPR), որոնք փնտրում էին ստեղծագործական ազատություն։ Չունենալով աշխատավարձ՝ անկախացած լրագրողները հույսը դնում էին հանրության նվիրատվությունների վրա։ Եվ դա աշխատում էր։ Օրինակ, 99% Invisible-ի համար քրադֆանդինգով հավաքվեց ռեկորդային 170,000 ԱՄՆ դոլար։

Այնուամենայնիվ, փողքասթների բումը (դրանց թիվը հասել է 800.000-ի, 2019-ին փողքասթ լսողների թիվն ավելացել է 14 միլիոնով) ազդել է արտադրության կազմակերպման, ֆինանսավորման և նաև ոճի վրա։ Գրեթե բոլոր հայտնի մեդիա կորպորացիաներն արդեն ունեն իրենց փողքասթ բաժինը (NYTimes, Vox, Economist և այլն)։

Կան փողքասթների նախագծեր, որոնց վրա աշխատում են տասնյակ կամ հարյուրավոր ձայնային ձևավորողներ, հետազոտողներ, սցենարիստներ, արդյունքում ստեղծում են մանրակրկիտ աշխատված ձայնային պատումներ, որոնք հիշեցնում են հոլիվուդյան ֆիլմեր՝ բերելով հոլիվուդյան եկամուտներ (Serial, Caliphate, S-Town)։ Այնպես որ, այլևս չի կարելի ասել, որ փողքասթն անպայմանորեն սիրողական, խոհանոցային գրույցներ են։ Շուկայի կայացումից պրոդյուսերներն սկնկալում են եկամուտներ։ «2019 Podcast Ad Revenue Study» հետազոտության համաձայն՝ մինչև 2021-ը փողքասթներում գովազդի շուկայի շրջանառությունը կգերազանցի մեկ միլիարդ դոլարը, արդեն իսկ այն կազմում է տարեկան մոտ 911 մլն դոլար։

Արդյոք բոլոր թվային աուդիո ֆայլերն են, որ կարելի է անվանել փողքասթ։ Շատերը կասեն այո, բայց փողքասթերները կասեն ոչ։ Փողքասթի նյութն ավելի անմիջական է, այն ավելի ինտիմ հաղորդակցություն է ստեղծողի և լսողի միջև։ Բառացիորեն փողքասթերը մտնում է ձեր մարմնի, գլխի, ուղեղի ու նյարդերի մեջ անմիջապես ականջակալներով՝ կտրելով ձեզ միջավայրից ու կենտրոնացնելով պատմողի ձայնի վրա։ Օրինակ, հայտնի հարցազրուցավարներ Քեռոն Օբրայենը կամ Գրեմ Նորթոնն իրենց փողքասթներում թույլ են տալիս լինել ավելի անմիջական, արտահայտել իրենց սուբյեկտիվ կարծիքները, ինչը չեն անում իրենց հեռուստատեսային շրուներում, NBC-ում և BBC-ում, համապատասխանաբար։

Ի տարբերություն հեռարձակվող ռադիոյի՝ փողքասթի դեպքում լսողն ընտրում է՝ ինչ լսել, ուստի ավելի ուշադիր է լսում։ Սա թույլ է տալիս ավելի մեծ կոզնիտիվ կենտրոնացում ու ավելի բարդ ինֆորմացիայի ընկալում։

Ձոն Ձայնին

Դրամատուրգ Բերտոլդ Բրեխտի, փիլիսոփա Վալտեր Բենյամինի և այլ մտածողների տարվածությունը ռադիոյով կարելի է վերագրել նրան, որ 20-ականներին այն միակ հեռարձակման տեխնոլոգիան էր։ Իսկ այժմ՝ լայվերի և VR-ի դարում, հին ձայնային մեդիան ընտրելը բացատրություն է պահանջում։

Ժամանակակից փողքասթերները սիրում են պաշտպանվել այսպես. մեր դոմինանտ զգայաբանը տեսողությունն է, սակայն ամենամոցիոնալը՝ լսողությունը։ Պատահական չէ, որ երաժշտությունն ամենամեծ էմոցիոնալ ազդեցությունն ունի մարդու վրա։

Այսպես, ձայնը հաղթում է որպես լսողների հետ անմիջականորեն շփվելու, նրանց պատումի ստեղծման մեջ ներգրավվելու գործիք։ Ձայնը նաև ավելի շատ տեղ է բացում ստեղծագործելու համար։ Պատահական չէ, որ փողքասթինգով տարածվում են ոչ միայն քաղաքական լուրեր, դոկումենտալ պատումներ, այլև գեղարվեստական գործեր՝ աուդիո-դրամա, սաունդ-պոեզիա և այլն։


Այնպես որ չկա փողքասթինգի՝ որպես ժանրային կատեգորիայի սահմանում։ Ավելին՝ ինչ է փողքասթը հարցը նման է հայելու։ Պատասխանից կարելի է հասկանալ, թե ինչ քաղաքական հայացքներ, նպատակներ և հետաքրքրություններ ունեք, ինչ ինտելեկտուալ հորումների վրա է հիմնված ձեր ճանաչողականությունը և այլն։

Օրինակ, եթե անհատ ստեղծագործող եք, իսկ ձեզ հուզող հարցերը դուրս են մնացել մեյնսթրիմ մեդիայից, ապա փողքասթինգը հիանալի միջոց է ստեղծելու ինդիվիդուալ մեդիա և հասնելու գաղափարակիցներին։ Եթե գովազդային գործակալ եք, փողքասթինգը կարող է դառնալ հիանալի բացահայտում. փողքասթների թեմաները հաճախ հստակ են, և եթե արտադրանքին սազող փողքասթ գտնեք, կհասնեք թիրախային լսարանին՝ խուսափելով հանրային թանկարժեք ու ռիսկային գովազդի տարածք գնելուց։

Եվ ուրեմն, ուրիշների սրտին հասնելու ամենակարճ ճանապարհը փողքասթն է։ Բայց սրտից սիրտ կամուրջը կկառուցվի այն դեպքում, եթե իսկապես կարողանանք ուսումնասիրել ձեր սրտի աշխատանքն ու ռիթմը՝ գտնելով այն, ինչն իրոք սիրում եք ու պատրաստ եք կրկնապատկել՝ կիսելով լսարանի հետ։ Չէ՞ որ ձայնը հույզ է, իսկ հույզերը չեն խաբում։

Հայոց փողփաթեղի պատմությունը

Փողփաթեղը Վեդիայի բաժնիկան երիտասարդ էջուղ է, որի ողջ կյանքը տեղափոխվում է 21-րդ դարի երկու տասնամյակների մեջ: Հայաստանում էլ փողփաթեղների պատմությունը չունի շատ հեռու գնացող պատմություն, փոխարենը դա թույլ է տալիս բաժնիկան հարակ ֆիքսել այդ կանապարհը: Մեր խնդրանքով դա արել է «Հեթ» փողփաթի հեղինակ Սամսոն Մարտիրոսյանը:



ՁԱՆՁՐՈՒՅԹԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

2015-ին ավարտեցի մագիստրատուրան, դուրս եկա գործից, ու գնացի հետ հայրական քաղաք Գյումրի: Մոտակա ժամանակները նպատակ չունեի ուսումնառելու և ուղևորվելու, թե որ մասնագիտական ճանապարհով էի ուզում առաջ շարժվել ու որ ուղղությամբ:

Քաղաքն էլ առաջվանը չէր. մանկության ընկերներից մարդ չէր մնացել. գրեթե բոլորը արտագաղթել էին, իսկ շփման շրջանակն շատ էր նեղացել՝ Երևանում անցկացրած տարիների ընթացքում որոշ կապեր մոռացվել էին, մյուսները՝ խզվել: Երևանում իրադարձություններով լի կյանքից հետո Գյումրիում ժամանակը կանգ առավ. անսովոր շոգ ամառը, անվերջ ձգվող երկար օրերը, պարապությունը, մեկուսացումն ու կամավոր գործազրկությունը դանդաղ փոխեցին իրականություն, ու հայտնվեցի տարօրինակ վակուումում: Մի քանի ամիս անց հասկացա, որ իրականությունս չփոխելու դեպքում կճահճանամ:

Ընկերներիցս Ջինը (իրականում՝ Արփինեն) այդ ժամանակ նույնպես հետաքրքիր տրանսֆորմացիաներ էր ապրում: Առաջարկեցի փողքաաթ սկսել՝ համաձայնեց: Ինչու հենց փողքաաթ: Որովհետև դրա համար մեզանից ռեսուրս չէր պահանջվում, համ էլ ես փողքաաթ շատ էի սիրում ու հաճախ էի լսում:

Ջինն աշխատել էր Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի ռադիոյում, որն այլևս չէր գործում, բայց այդտեղ կար առողիո ձայնագրման և խմբագրման տեխնիկա: Գրասենյակի վերածած՝ սև տուֆից սեփական տան երկրորդ հարկում ունեինք մեր սիրած վայրը՝ սպունգով ձայնամեկուսացրած պատերով «բուրկան»: Այն այնքան փոքր էր, որ համակարգիչը, ձայնագրիչն ու երկու աթոռ հազիվ էին տեղավորվում: Ձմռանը սրանց ավելացավ նաև էլեկտրական «պլիտան»: Առանց երկար մտածելու ու խորանալու փողքաաթի անունը դրեցինք First Armenian Podcast: Հստակ ձևաչափ չէինք ընտրել. տեղում թեմա էինք որոշում, միացնում էինք ձայնագրիչն ու գրուցում: Թեմաները շատ բազմազան էին՝ սկսած հանրային տրանսպարտից վերջացրած բուսակերություն: Առաջին էպիզոդը լույս տեսավ 2015-ի հոկտեմբերին: Ընդհանուր առմամբ ձայնագրեցինք ու ՅուԹուբում հրապարակեցինք 16 էպիզոդ: Ամենաշատը լսել էին բարբառների մասին էպիզոդը, որի ընթացքում խոսում էինք մեր բարբառով ու քննարկում Հայաստանի այլ բարբառները:

Հինգ ամսից և՛ Ջինը, և՛ ես աշխատանք գտանք, իսկ որոշ ժամանակ անց նա տեղափոխվեց Երևան, ու փողքաաթն անցավ երկրորդ պլան: Պարբերաբար մտածում էինք վերսկսելու մասին, բայց այդպես էլ չշարունակեցինք:



First Armenian Podcast-ի համահեղինակ Սամսոն Մարտիրոսյանը

ԻՆՉՊԵՍ ԽՈՍԵՑ ՏՊԱԳԻՐ ՄԱՍՈՒԼԸ

First Armenian Podcast-ը ստեղծելու առաջին փորձից չորս տարի անց ես նորից սկսեցի զբաղվել փողքաաթինգով:

Բայց այս անգամ այն ուղղակի հոբբի չէ, այլ մասնագիտական գործունեություն: Հիմա ես աշխատում եմ «Հետք» ինտերնետային թերթում ու անցած սեպտեմբերին հրապարակեցի «Հետքի» նույնանուն փողքաաթի առաջին թողարկումը:

Մոտ 30 թույլ տևող աուդիո պատումների միջոցով ներկայացնում եմ մեր արած հետաքննություններն ու բացահայտումները, գրուցում եմ հետաքննող լրագրողների հետ, որոնք պատմում են հոդվածներում չներառված մանրամասներ, լուսաբանում եմ սոցիալական, քաղաքական և հանրությանը հուզող այլ թեմաներ:

Ու «Հետք» միակ թերթը չէ, որն ունի փողքաաթ տարբերակ: Ընդհանրապես, միայն լրատվամիջոցները չեն, որ փողքաաթներ են ստեղծում: Այս տարվա ընթացքում կարելի էր նկատել, թե ինչպես է փողքաաթ լսելու մշակույթը դանդաղ քայլերով հասնում Հայաստան: «Երևան» ամսագրի այս համարն էլ դրա վաղ ապացույցն է:

ԻՆՉՈՒ ԷՆՑ ՓՈՂՔԱՍԹ: ՈՐՈՎԷՏՆ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՄԵԶԱՆԻՑ ՌԵՍՈՒՐՍ ՉԷՐ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ, ՀԱՄ ԷԼ ԵՍ ՓՈՂՔԱՍԹ ՇԱՏ ԷՐ ՍԻՐՈՒՄ ՈՒ ՀԱՃԱԽ ԷՐ ԼՍՈՒՄ

Two Songs a Week

Դիանա Մասյակյան

Ինչ համար փողքաաթը լիցիաթափելու հիմնական միզույն է՝ իմ անհնալան Մարտիրոսյանը: Այսպես բարձրագույնում եմ այն թեմաները, որոնք չէի խնայելի ընկերոս հեղ 15 թույլում սուրբ լսելիս: Մասիններով փախնում էի իմ մորտակը, իսկ հետո միտածեյի, որ կարելի է կիսվել: Two Songs a Week-ն այն վայրն է, որտեղ կարող եմ լինել այն, ինչ կամ. չէ որ կյանքում բոլորս արարելու դերերով ենք ներկայանում: Ես երկար ժամանակ աշխատել եմ հեռուստա-րեալությունում և գիտեմ՝ ինչ է կարող, բայց միշտ ուզել եմ կարգի մյուս կողմում լինել: Այնպես, որտեղ իմ հանգստության գոտին է: Փողքաաթը սրեղծում է պրամտություն, իսկ ես հենց դա էի փնտրում: Եթե ինչ հարցնեին, թե ինչի մասին է իմ փողքաաթը 3-4-րդ էպիզոդներում, չէի կարողանա ասել, բայց հիմա գիտեմ, որ այն հարգանքի փոքի է բնությանն ու մարդկանց: Ես մարդկանց շար էմ սիրում, սիրում եմ ուսումնասիրել, թե ինչպես է աշխատում մարդու ուղեղը, երբ նա հուսվում է կամ սրեղծագործում: Վերաբերվում եմ մարդկանց որպես բնության կապարյալ սրեղծագործություն:

Թեմաները շար արարել են, դրանց բոլորին միափրում են իմ հեղափոխությունները: Արթությանը լեզվաբան եմ՝ ռուսերենի, ռուս գրականության և անգլերենի մասնագետ, նաև հեղափոխվում եմ բանահյուսության ու փոքրում եմ հավանալ, թե ինչպես են այն օգրագործվում արարելու համաշխարհային ժանրերում, հավանալ, թե ինչպես են մի ուսույուն սրանում ժողովրդական և այլ մեղեդիները: Երաժշտությունն արտահայտվելու ճն է, և ամեն մարդ արտահայտվում է իր ճնով:

Երևի ամենաշար սիրում եմ իմ առաջին էպիզոդը, թեև այն որակային առումով սիզում է մյուսներին, բայց ամենաէմոյոնալն է, դրանից է սկսել ճնափրվել իմ ուղը: Ուրիշ փողքաաթներ էլ եմ լսում: Հայկականներից օրինակ՝ «Սև բիբաթը», «Երևան» ամսագրի փողքաաթները, նաև «Արտատվող հարցեր» փողքաաթը և «Հեղի» էպիզոդները:

ՎԱՂ ՇՐՋԱՆ

2005-ից ի վեր, երբ Oxford American Dictionary բառարանը փողքաաթ բառն ընտրեց տարվա բառ և 2006-ից այն ավելացրեց բառարանում, փողքաաթինգն Արևմուտքում զարգացավ արագ տեմպով՝ վերջին տարիների ընթացքում սահմանելով ռեկորդներ թե՛ փողքաաթների, թե՛ փողքաաթ լսողների քանակի առումով: Առանց չափազանցելու կարելի է ասել, որ հիմա ցանկացած ճաշակի ու հետաքրքրության տեր մարդու համար կա համապատասխան փողքաաթ:

Հայալեզու փողքաաթինգն էլ ունի զարգացման որոշ հետագիծ, որը կփորձեմ համառոտ ներկայացնել: Սա, իհարկե, հեշտ գործ չէ. հնարավոր է՝ որոշ փողքաաթներ ներառած չլինեմ, ինչի համար հեղինակներից ներողություն եմ խնդրում:

Ինչպես արդեն նշեցի, First Armenian Podcast-ի անունը դնելուց մի թեթև փորփորել էի փողքապո լսելու հավելվածները, դրանցում հայալեզու փողքապո չէի գտել ու դրա համար էլ հենց այդպես էի անվանել: Հետո պարզվեց, որ այն եղբան էլ First չէր: Եթե համարենք, որ փողքապոն ենթադրում է տարածման որոշակի տեխնոլոգիա ինտերնետային կայքերում, RSS-ով ու փողքապո լսելու հավելվածներով (կարճ ասած՝ ոչ կենտրոնացված ձևով տարածվող աուդիո պատմաներ), ապա հայալեզու փողքապոների պատմությունը սկսվում է վաղ 2000-ականներից, երբ ինտերնետը սկսեց կամաց-կամաց հասանելի դառնալ երկրում և հատկապես մեծ թափ ստացավ 2009-ին նոր պոպուլյարիթի՝ Յու-թուբի ի հայտ գալով: Հիմա փողքապոն գոնե պետք է հասանելի լինի ամենատարածված Apple Podcast կամ Google Podcasts հավելվածներում, բայց տարիներ առաջ այդպես չէր:

Առաջիններից էր Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի **«Անիվ հետաքննություններ»** հաղորդաշարը, որը սկսեց տարածվել 2004-ից: Հաղորդման լրագրողներից մեկը՝ Մարինեն, այս հոդվածը գրելու համար ինձ տրամադրեց մի քանի էպիզոդ: Ու բացատրեց. «Այս հաղորդումն «Արձագանք» ռադիոյով հեռարձակվող «Անիվ» talk show-ի շարունակությունն էր: Որոշեցիք նոր ֆորմատով շարունակել, քանի որ լսարանը բավականին մեծ էր, մեզ վերահեռարձակում էին նաև մարզային ռադիոկայանները Գյումրիում, Վանաձորում»:

Առաջին հետաքննությունը Ջերմուկի պայթյոռի շերտի մասին էր: 2004-ին հեղինակներն անդրադարձել են վերջերս մեծ աղմուկ բարձրացրած թեմային՝ արել են երեխաների ապօրինի որդեգրման դեպքերի մասին էպիզոդ: «Բացի ինտերնետով տարածելուց, այն հեռարձակում էր նաև Հանրային ռադիոն», – ավելացրեց Մարինեն: Ընդհանուր առմամբ, հեղինակները պատրաստել են 7-8 էպիզոդ: Հաղորդման վերջին էպիզոդը հոկտեմբերի 27-ի դեպքերի մասին է եղել, որը Հանրայինի եթերով այդպես էլ չի հեռարձակվել:

Ինտերնետի տարածմանը զուգահեռ սկսեց զարգանալ նաև բլոգերությունը: 2007-ից հեռարձակվող **«Հայկական բլոգոսֆերա»** փողքապոն, ինչպես հաղորդավարն է ասում բացման խոսքում, բլոգ աշխարհի «քննարկումների, դեպքերի ու դեմքերի» մասին էր:

Մինչև 10 ռոպե տևողությամբ էպիզոդում հաղորդավարն ընթերցում էր բլոգերների գրառումները

ու լսարանին ծանոթացնում ակտիվ քննարկվող թեմաներին: Հաղորդումը պատրաստող կայքի խմբագիրը՝ Գեղամ Վարդանյանը, ասաց, որ «հայերենով բլոգ վարելը համեմատաբար նոր երևույթ էր, քանի որ ավելի տարածված էր պրակտիկան, երբ հայաստանցին ուսներեն կամ անգլերեն էր բլոգ վարում... Հաղորդումը բլոգը պոպուլյար դարձնելու համար էր ու մեդիայի այդ համեմատաբար նոր տեսակը հետազոտելու յուրահատուկ գործիք էր»:

Այս փողքապոի մի փոքր ձևափոխված տարբերակն էր **«Ցանցառներ ռադիո»** հաղորդումը, որ հեռարձակվում էր 2011-ից: Փողքապոն խոսում էին շաբաթվա ցանցային նորությունների, ինտերնետային քննարկումների ու այդ ժամանակ նոր-նոր պոպուլյար դարձող BarCamp-երի ու այլ tech միջոցառումների մասին:

20 տարի առաջ՝ 2000-ին, արձակագիր Լևոն Խեչոյանը եվրոպական 21 երկրներից 103 այլ գրողների հետ մասնակցում է մի ծրագրի, որի ընթացքում գրողները գնացելով ճանապարհորդում են ամբողջ Եվրոպայով՝ սկսելով Պորտուգալիայից:

Ճանապարհորդության արդյունքում նա գրում է «Եվրոպայի երկաթե ճանապարհներին» էսսեն: Իսկ 2009-ին այն դառնում է աուդիո պատմություն **«Մարդկանց Եվրոպա»** խորագրով: Լևոն Խեչոյանն իր ճանապարհորդությունից հիշարժան դեպքեր է պատմում, խոսում է իր տպավորությունների մասին: «Այն ժամանակ դոկումենտալ ռադիոն, կարծես, դառնում էր պոպուլյար, հիմա այս չորս մասից բաղկացած աուդիո հաղորդումը կարելի է համարել դոկումենտալ փողքապո», – պատմում է լրագրող Մարինե Սաֆարյանը:

Մոտավորապես 2009-ից սկսած ինտերնետով տարածվում են նաև **«Ազատություն ռադիոկայանի»** հաղորդումները: Դրանք հիմնականում նորություններ են, բայց ռադիոկայանն ունի նաև այլ հեղինակային հաղորդումներ, որոնցից մեկն է Քևորգ Ստամբուլյանի **«Նորագույն պատմություն»** դոկումենտալ շարքը, որը «ներկայացնում է այն ուղին, որ անցել է Երրորդ հանրապետությունը վերջին երեք տասնամյակներին»:

Հայաստանի հանրային ռադիոյի եթերն ինտերնետով լսելու հնարավորություն նույնպես կա, ունեն նաև Soundcloud հաշիվ, բայց, ցավոք, Հանրայինը չունի ալիք Apple Podcasts, Google Podcasts և այլ հավելվածներում: Փոխարենը Հանրայինի և այլ հայկական ռադիոալիքների եթերը հասանելի է **Յու-թուբի բջջային հավելվածի** ժամանց բաժնում:



First Armenian Podcast-ի համահեղինակ Արմինեն



«Անիվ հետաքննություններ» փողքապոի լրագրող Մարինե Սաֆարյանը

ՄԵՐ ՕՐԵՐ

Ես ուսումնասիրել եմ միայն հայալեզու փողքապոները, բայց եթե փորձենք ընդլայնել շրջանակը, կգտնենք ավելի շատ հայկական փողքապոներ, պարզապես դրանք հիմնականում անգլերեն են: Հիմա հայալեզու փողքապոների թիվը նախկին տարիների համեմատ մի քանի անգամ աճել է: Միայն 2019-ի ընթացքում ստեղծվել է շուրջ 25 հայալեզու փողքապո: Անդրադառնամ նրանց, որոնք ակտիվ են և պարբերաբար ավելացնում են նոր էպիզոդներ:

Լրատվականներից փողքապոներ ունեն Hetq-ը, Azatutyun-ը, CivilNet-ը, Mediamax-ը, Infocom-ը, Media.am-ը և EVNReport-ը: Տպագիր ամսագրերից «ԵՄԿԱՄ»-ը և «Regional Post Caucasus»-ը թերևս միակն են, որ ունեն փողքապո:

Երաժշտական ուղղվածություն ունեցող փողքապոներից կարելի է առանձնացնել մի քանիսը: **«Փնթի խորովակը»** հայկական ալտերնատիվ սուբկուլտուրաների և դրանց դեմքերի մասին է: Հեղինակը խորքային հարցազրույցներ է անում երաժիշտների հետ և փորձում բացահայտել նրանց: Մեկ այլ երաժշտական փողքապո է **Caucasus All Frequency**-ն, հեղինակները երկու երաժիշտներ են, մեկը՝ ազգությամբ հայ, մյուսը՝ Վրաստանում բնակվող ամերիկացի: Նրանք երաժշտության միջոցով ուսումնասիրում են կյանքն ու մշակույթը կովկասյան տարածաշրջանում, և, ինչպես իրենք են նշում, «փորձում ենք ամբողջական և խորը նկարագրել կյանքը Կովկասում երաժշտության և ձայնի միջոցով», նրանց էպիզոդները և հայերեն են, և՛ անգլերեն: Իսկ **Post Rabiz**-ը «փողքապո է ռաբիսի մասին ռաբիսից հետո»: Հեղինակը բացահայտում է ռաբիսի շուրջ քննարկումներն ու բանավեճերը, փորփորում է արխիվներն ու հրապարակում մինչ այդ չհանրայնացված ռաբիսի ձայնագրություններ, կարդում է պոեզիա: «Post Rabiz-ը» կարելի է համարել նաև sound art. **2 Songs a Week**-ը շատ հանգիստ տրամադրություն ունեցող փողքապո է. հեղինակը կիսվում է երաժշտությամբ, պատմություններով, սա one-person ձևաչափի հեղինակային փողքապո է:

ՀԱՅԱԼԵԶՈՒ ՓՈԴՔԱՍԹՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՎՈՒՄ Է ՎԱՂ 2000-ԱԿԱՆՆԵՐԻՑ, ԵՐԲ ԻՆՏԵՐՆԵՏԸ ՍԿՍԵՑ ԿԱՄԱՑ-ԿԱՄԱՑ ՀԱՍՍԱՆԵԼԻ ԴԱՌՆԱԼ ԵՐԿՐՈՒՄ



Վրջակազիր
Լևոն Ռեչոյանը

Urish Football

Ռոբերտ Մարկոսյան

Փողիքաթիվը ևս մի հնարավորություն է խոսելու ոլորտում իմ հեղափոխություններից ավելայնելու և ճեռի բերելու նոր լաբան։ Ֆորմատը հասանելի է ավելի մեծ լաբանի համար։ Բայի այդ, հենց փողիքաթիվը ճայնագրող մարդու գործն ավելի հեշտ է։ Վրգինգը շար ավելի շար ժամանակ է պահանջում՝ կապակցություն սկսած, ավարտած մոնիթորինգի աշխատանքներով։ Բայի այդ, չես կարողանում արագաճող այլ բաներով պատվել։ Իսկ փողիքաթիվը համար լավ միկրոֆոն էս ունենում, թեթև դիսկոն էս անում և արարարար է։ Պրակտիկ է, կարող էս կողմից միայնել, լսել ու ոչինչ բայ չես թողի։ Իմ փողիքաթիվը սպորտի մասին է. խոսում ենի պարբեր թեմաներից, այդ թվում՝ ցավոր։ Հայկական ու համաշխարհային ֆուտբոլ, դրա շուրջ արարող լիքը հարցերով։ Վերջերս խոսեցինի մեր ընկերոջ Երվանդի մասին, ում բանարարել էին Ֆինլանդիա-Հայաստան խաղից հետո, և նա մի խանի շաբաթ անցկացրել էր Մոսկվա խաղախի բաներից մեկում։ Այդ թեման հենց մեր պոլոյից հետո մեծ պարածում սրապալ։ Լաբում եմ մեր ամենակարևոր էպիսոդներից էր։

Հետաքրքիր են նաև տարբեր անհատների ու խմբերի կողմից ստեղծված փողքաթիվները, որոնց թեմաները բազմաբնույթ են։ Օրինակ, **«Ականջողը»** առաջին ֆեմինիստական հայալեզու փողքաթիվ է, որի հեղինակներն «ինքնակոչ ֆեմ-աստվածուհիներ են ու հակառակ բոլոր պատկերացումներին՝ տղամարդատյաց չեն, սիրում են վարդագույնը, շպարվում են ու ամեն օր մեծ ու փոքր քայլերով պայքարում սեքսիստական մտածողության դեմ»։ **«Լսեք լսելու մասին»** փողքաթիվի հեղինակը 14-ամյա Արամն է, ով լսողական խնդիր ունի ու որոշել է իր փողքաթիվ միջոցով պատմել «ամեն ինչ կապված լսողության խնդրի, այդ խնդիրը կրողների և այդ խնդրի լուծումների մասին»։ Ակտիվ է նաև **«Ան բիբար»** հարթակի փողքաթիվը, որը ձախակապ արիզմայով վերլուծում է Հայաստանում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները։ **«Անկանոն»** փողքաթիվը բարդ է դասակարգել որևէ ուղղվածություն ունեցող փողքաթիվների շարքում։ Հեղինակն ասում է, որ «թեմաներն էլ իրենց հերթին ենքան տարբեր են, որ մարդ չի իմանում՝ որից սկսի ու որով ավարտի»։ **«Պողկաստ»** փողքաթիվի հեղինակներն ընկերներ են, որոնք պարբերաբար ձայնագրում են իրենց գրույցները, նույնպես չունեն հստակ թեմաներ. պատմում են, ինչպես իրենք են ասում, «աբիշնի ժիզնեննի» անձնական պատմություններ, քննարկում

են հայաստանյան իրականությունում կատարվող իրադարձություններ ու ունենում են հյուրեր։ Վերջերս ակտիվացել են նաև SS ոլորտում աշխատող անհատներն ու ընկերությունները։ Այսպես, **Technoworld** փողքաթիվում գրուցում են «տեխնոդեմքերի» հետ, լուսաբանում հայկական ու համաշխարհային SS իրադարձություններ։ **«Ցանցառներ ռադիոն»** վիդեո փողքաթիվ է, տարածվում է ՅուԹյուբով, ուղիղ եթերով, առանց խմբագրումների։ Հեղինակները պատմում են, թե ով ինչ խնդրի լուծման վրա է տառապել ու քննարկում են tech իրադարձություններ։ Նրանցից մեկը՝ Նորայր Չիլինգարյանը, ինձ ասաց, որ «արտահայտված լինելու ցանկություն կա... սկզբունք կա՝ պետք ա չբացատրենք, այլ խոսենք, ինչպես խոսում ենք իրար հետ»։ Կան հայալեզու այլ փողքաթիվներ նույնպես, բայց, ցավոք, դրանք այդքան ակտիվ չեն, որոշները, ըստ էության, նոր էպիզոդներ էլ չեն ձայնագրում։ Անկեղծ ասած, երբ Ջինի հետ սկսեցինք մեր գրույցները ձայնագրել, դժվար էր պատկերացնել, որ մի քանի տարի անց առկիով լրագրությունը կդառնա իմ հիմնական աշխատանքներից մեկը։ Մեր փոքր «բուդկայում» ունեցած փորձառությունն իմ առջև բացեց այն դարպասները, որոնք տանում էին դեպի փողքաթիվնալ աշխարհ։

Լսե՛ք մեզ հիմա


2019 թվականին Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը* սկսեց «Լսի՛ր ինձ հիմա» ծրագիրը, որի նպատակն էր Հայաստանում զարկ տալ փոդքասթի ոլորտի զարգացմանը: Արդյունքում ծնվեց երկու տասնյակից ավելի հայալեզու փոդքասթ, որոնք հասանելի են հայկական փոդքասթների առաջին դարանում (media.am/podcast): Փոդքասթերները համադրում են ռադիոյի դասական ավանդույթներն ու ձայնային սթորիթելինգի նորարարական կանոնները՝ ստեղծելով տարբեր ժանրերով աուդիոպատումներ՝ վավերագրությունից և ստեղծարար պատումներից մինչև բանավոր խոսքի, երաժշտության և դաշտային ձայնագրությունների համադրումներ: Իսկ ԵՐԵՎԱՆԸ այստեղ խոսել է այդ նախագծերից մի քանիսի հեղինակների հետ ու պարզել, թե ինչու է պետք լսել իրենց հիմա:

«Բեդովլաթին» հյուր են գալիս տարբեր ժամանակների և իրականությունների բեդովլաթ դեմքեր ու զրից են անում:




ԼՈՒՄԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆ

Ես սովորում եմ կինոռեժիսուրա և ուսման ընթացքում նկատեցի, որ ձայնի հետ աշխատելն ինձ համար առանձնահատուկ հաճույք է՝ երևակայելու ավելի լայն տարածք է տալիս: Հետո իմացա Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի փոդքասթային ծրագրի մասին և որոշեցի անպայման դիմել: «Բեդովլաթը» շատ վանաձորյան է, բոլոր մարդիկ, ովքեր աշխատում են փոդքասթի վրա, այնտեղից են, և դրանից ստեղծվում է տիպիկ վանաձորյան մթնոլորտ: Մեզ հյուր են գալիս տարբեր ժամանակների ու իրականությունների կերպարներ, խոսում ենք տարատեսակ առօրեական թեմաներից: Մեր փոդքասթը գրավում է մարդկանց նրանով, որ կոտրում է ժամանակի և տարածության մասին պատկերացումները, ու ամեն պահ կարող ենք մոգոնել այն, ինչ ուզում ենք: Այլ փոդքասթներ լսելու ժամանակ երբեմն չի մնում, բայց հայկականներից սիրում եմ լսել «Ականջօղը», «Փնթի խողովակը», «Սև բիբարը» և «Հետքի» փոդքասթերը: Առհասարակ փոդքասթը, ի տարբերություն ուրիշ մեդիա ֆորմատների, ավելի անմիջական է, ստեղծարար ու քիչ ռեսուրսներ է պահանջում: Լսողին ավելի մոտ է փոքասթը, քան կինոն կամ ռադիոն: Մարդն ուզում է, որ հենց իր հետ խոսեն, ուզում է լսել անմիջական գրույցներ:



* Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը հասարակական կազմակերպություն է, որը 25 տարի աշխատում է Հայաստանում խոսքի ազատության, լրագրության զարգացման, հասարակությանը որակյալ տեղեկատվությունը հասանելի դարձնելու ուղղությամբ:



**«Պոստ Ռաբիզը»
փողքասթ է ռաբիզի
մասին՝ ռաբիզից հետո:**




ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Փողքասթը ծայրը շոշափելու տեղ է: Ինձ օգնում է ընկալել, որ երբ խոսում ես, քեզ լսում են ու դա միջոց է: Նախկինում տարբեր ֆորմատներով եմ ստեղծագործել, երբ, օրինակ, որոշակի հանգավորմամբ մի հատված եմ գրում ու չեմ բարձրաձայնում (գրում եմ մի տեղ կամ մտքումս եմ պահում), քամու պես անցնում գնում է: Իսկ երբ ծայնագրում ես, արձանագրվում է: Փողքասթը հնարավորություն է տալիս աշխատելու զգայարանների հետ՝ հմտացնելով լսելու ակիբը:

Իմ փողքասթը ռաբիզից հետո եկող ենթամշակույթների մասին է՝ դրա ոճային, գաղափարական և երաժշտական տարրերի ուսումնասիրությունն է: Մենք բոլորս կրում ենք ռաբիզի էլեմենտները մեր մեջ կամ էլ դեմ ենք դրանց: Փորձում եմ հասկանալ՝ ինչ է անում այն մեր ցանկությունների, ճաշակի և ականջների հետ, քանի որ միայն երաժշտություն չէ, ապրելակերպ է սկսած խոսելաոճից, ավարտած հագուստի ընտրությամբ և միջավայրով: Սա փողքասթի հետազոտական հատվածն է, կա նաև պոետիկ մասը: Դժվար է այն կապել պոստ ռաբիզ հասկացության հետ, բայց ընդհանրություններ կան, երկուսն էլ խոհափիլիսոփայական տարրեր ունեն: Երկուսն էլ նոր ռիթմեր են գտնում: Կարևորության տեսանկյունից կնշեի Ալիկ Սարգսյանի անձնական արխիվին անդրադարձող Էպիգրոդը: Պոետիկներից «Թիթեռնիկը» ականջիս հաճելի է: Ինքս փողքասթներ լսում եմ: Օրինակ՝ Marxist Poetry-ն կամ Pen and Poet-ը: Նաև լսում եմ իմ ընկերների փողքասթները: Ծրագիրն ինձ տվել է ռեսուրսներ անելու այն, ինչ հետաքրքիր է անել:




Փողքասթ կինոյի և դրա հետ կապված ամեն ինչի մասին:



ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՎ ԱՍՏՂԻԿ

Սինեփոդքասթը կինոյի մասին ռադիոհարթակ է, որտեղ զրուցում ենք տարբեր ֆիլմերի, ռեժիսորների, հիմնական տեղեկացների մասին: Այս ֆորմատում չունենալով վիզուալ պատկերներ օգտագործելու հնարավորություն՝ ավելի շատ ուշադրություն ենք դարձնում ֆիլմերի ծայնային կողմին: Կարող է թվալ, որ կինոյում ծայնն ու երաժշտությունը երկրորդական, ֆոնային նշանակություն ունեն: Բայց շատ հաճախ հենց ծայնային տարրերն են յուրահատուկ մթնոլորտ ստեղծում և ասոցիացիաներ առաջացնում ֆիլմի հետ՝ մնալով մարդկանց հիշողության մեջ: Սինեսկոպն աշխատում է տարբեր ֆորմատներով՝ տեքստեր, հարցազրույցներ, վիդեո էսսեներ: Բայց կարծում ենք՝ հենց փողքասթը մեզ հնարավորություն կտա մարդկանց համար ավելի հասանելի դառնալու: Մինչ ծրագրի սկսելը մենք մի էպիզոդ թողարկել էինք, բայց քանի որ չունեինք համապատասխան տեխնիկա, ծայնի որակն այդքան էլ լավ չէր: Իսկ ծրագրին մասնակցությունը մեզ տեխնիկայի առումով մեծ հնարավորություններ տվեց: Դասընթացն էլ շատ հետաքրքիր մասնագետ էր վարում՝ Սքոթ Քերիերը, ով էլ ավելի ոգեշնչեց հենց փողքասթի միջոցով աշխատելու: Հիմնականում երկու տիպի թողարկումներ ենք անում՝ երկար զրույցներ և ծայնային արթ-էքսպերիմենտներ: Մեր ամենասիրելին երևի թե կինոյում ծայնի զարգացման մասին կարճ էպիզոդն է՝ 'You Ain't Heard Nothin' Yet!' անունով, որը, իմիջիայլոց, կինոյում առաջին հնչունային նախադասությունից է:



**Ամեն ինչ կապված
լսողության խնդրի, այդ
խնդիրը կրողների և այդ
խնդրի լուծումների մասին:**



ԱՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Մինչ ծրագրին մասնակցելը ես ունեի բլոգ, յուրօրյան ալիք, բայց փողքասթի մասին չէի լսել: Երբ մայրիկս համացանցում պատահաբար տեսավ ՄՆԿ-ի հայտարարությունը փողքասթի մասին և ցույց տվեց ինձ, առաջին հերթին ինձ գրավեցին «Լսիր ինձ հիմա» բառերը: Լսողության խնդիր ունեմ, և ինձ միշտ հետաքրքրում են լսելու հետ կապված բոլոր թեմաները: Մասնակցությունը ծրագրին ինձ շատ բան տվեց՝ նոր ընկերներ ու նաև փորձառություն: Մինչ այս ես երբեք ժյուրիի առջև չէի հայտնվել, արտասահմանցի մասնագետների հետ չէի աշխատել, նաև հյուրանոցում մենակ չէի մնացել: Մի խոսքով, ահա այդպես ամեն ինչ սկսվեց: Ժյուրիին դուր էր եկել հենց փողքասթի միջոցով լսողության խնդիրը ներկայացնելու գաղափարը, և ես մասնակցեցի դասընթացին, ձեռք բերեցի փողքասթի մասին գիտելիքներ, և արդեն հասցրել եմ հինգ էպիզոդ պատրաստել:

Իմ փողքասթներից ինձ դուր է գալիս խուլ վարորդների և նրանց իրավունքների մասին էպիզոդը, որը ծայնագրել եմ հայրիկիս հետ: Ի դեպ, այն առայժմ ամենամեծ արձագանք գտած էպիզոդն է՝ մոտ 800 լսում ունի, ինչը, կարծում եմ, շատ լավ է, քանի որ ինչքան շատ մարդիկ իրազեկվեն, այնքան ավելի արագ կլուծվեն խնդիրները: Հայաստանում, ինչպես աշխարհի գրեթե բոլոր երկրներում, կան բազմաթիվ խնդիրներ բոլոր տեսակի առողջական խնդիր ունեցող մարդկանց համար, ինչպես նաև՝ լսողական խնդիր ունեցողների համար: Իմ փողքասթի միջոցով փորձում եմ բարձրաձայնել այդ խնդիրները և առաջարկել լուծումներ:




ԱՐԵՎ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Փողքասթը վլոգինգի և բլոգինգի մեկ այլ ֆորմատ է: Սկզբում կային մտքեր վլոգ նկարելու, բայց հետո հնարավորություն հայտնվեց փողքասթինգով զբաղվելու, և որոշեցի այդ ուղղությամբ էլ գնալ:

Իմ փողքասթը պայմանականորեն կարելի է բնութագրել «այլ մշակույթի մասին»: Բայց ինձ համար շատ կարևոր էր, որ այն հետաքրքիր լինի ոչ միայն ալտերնատիվ երաժշտությամբ ու ենթամշակույթներով հետաքրքրվող մարդկանց, այլ լայն մասսաների համար: Ես կարծում եմ, որ անդերգրաունդ հիմա ըստ էության գոյություն չունի, բայց կան շատ հավես ոչ մեյնթրիմ երաժիշտներ, արտիստներ, որոնց ես փորձում եմ համախմբել: Եվ գուցե արդեն սրա արդյունքում մի օր կձևավորվի իսկական հայկական անդերգրաունդ: Հիմա «Փնթի խողովակում» մարդիկ կարող են մեր անմիջական հարցազրույցներով ծանոթանալ նոր երևույթների ու նոր պերսոնաժների հետ, հասկանան, թե ինչ ա կատարվում մեյնսթրիմից դուրս:

Հիմա փորձում եմք մի քիչ փոխել ֆորմատը, որ ոչ թե ուղղակի հյուր գա մեր մոտ միկրոֆոնի մոտ նստի ու խոսա, այլ մենք գնանք հյուր ու ներկայացնենք հերոսին իրա բնական միջավայրում, ուղղակի տուսվենք հետներն ու էդ վիճակը փոխանցենք: Դրա համար իհարկե նաև կավելացնենք վիդեոֆորմատը, որ ոչինչ բաց չթողնենք:



**«Փնթի խողովակը»
հայկական ալտերնատիվ
սուբկուլտուրաների և դրանց
դեմքերի մասին է:**




ԿՈՒՇԱՆԵ ՉՈՒՆՅԻՆ

Երբ ինձ հարցնում են, թե ի՞նչ է փողքասթը, ես պատասխանում եմ՝ իրական միջավայրը զգալու հնարավորություն: Երբ մարդը լսում է փողքասթ, պետք է փակի աչքերը, կտրվի ամբողջ աշխարհից ու հայտնվի այն միջավայրում, որտեղ տեղի է ունենում գործողությունը: Զետու կարող է բացել աչքերն ու հետ գալ:

Իմ փողքասթ ալիքը կոչվում է ՇՈՒՆԶ: Ընկերներս գիտեն, որ երբ սկսում եմ խմբագրել ձայնագրությունը, միշտ ասում եմ՝ այ այստեղ ուզում եմ շնչել, այստեղ շնչելու տեղ չես թողել, շունչս կտրվեց, երաժշտություն ավելացրու, ես մարդը շնչում է, թե չէ... Երբ լսում ես փողքասթ, պիտի կարողանաս լիարժեք շնչել, այդ պատճառով իմ ալիքը կոչվում է ՇՈՒՆԶ:

Ես սկսել եմ մի շարք, որն անվանել եմ WEIcome to Հայաստան՝ առաջին երկու տառերը մեծատառով, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է մենք՝ WE: Ես կարծում եմ, որ այն մարդիկ, որոնք գալիս են Հայաստան, պիտի ունենան մենք-ի զգացողություն, հավատան, որ մեզնից մեկն են ու մենք ուրախ ենք հյուընկալել նրանց այս երկրում:

Այս շարքում ես գնում եմ Հայաստանում ապրող արտասահմանցիների տուն: Զետս անպայման վերցնում եմ գաթա, որը ես եմ պատրաստում ու գնում ուղիղ իրենց խոհանոց: Մենք պատրաստում ենք որևէ ազգային ուտեստ (վերջին էպիզոդում իտալական լազանիա էր, քանի որ հյուրերս իտալացիներ էին) ու գրուցում ենք: Մեր թեման խոհանոցը չէ, ավելին, ուտելիքից չենք էլ խոսում: Մեր գրույցի առանցքում Հայաստանն եկած մարդն է, Հայաստանն իր աչքերով տեսնող ու գնահատող մարդը, որը երբեմն իմ երկրի մասին ավելին կարող է պատմել, որովհետև նա օբյեկտիվ է: Մեր գրույցը մարդու իրավունքների, Հայաստանում ներդրումների հնարավորությունների, այս երկրում ապրելու հեռանկարների, հյուրասեր հայերի, տիաճ ու նյարդայնացնող երևույթների մասին է: Սա իմ հյուրերի Հայաստանն է՝ շատ հյուրասեր, վատ երթևեկությամբ, հրաշալի մարդկանցով, ծխախոտի անկառավարելի ծխով, զիլ երիտասարդներով ու ստեղծարար գաղափարներով:



**«Շունչի» շրջանակում
WEIcome to Հայաստան
շարքը պատմում է
Հայաստանում ապրող
օտարերկրացիների մասին:**

ԿՐՔՈՏ ՍԵՐ ԱՌ ԶԱՅՆՆ ՈՒ ՊԱՏՈՒՄԸ. ԱԿԱՆՋՕՂ ՓՈԴՔԱՍԹ

ԵՐԵՎԱՆԻ խնդրանքով «Ականջօղի» համահիմնադիր Անահիտը պատմում է մեկ թողարկման օրինակով այն մասին, թե ինչպես է ընդհանրապես պատրաստվում Հայաստանի առաջին ֆեմինիստական փողքասթը:


Ինձ թվում ա՛ ես ու Գոհարը հանդիպել ենք, ընկերություն ենք արել, որ վերջում էդ վերաճի ու դառնա «Ականջօղ» փողքասթ, կամ ինչպես ասվում ա մեր ամեն էպիզոդի սկզբում՝ Ականջօղ-օղ: Մեր ստեղծագործականությունը, հետաքրքրությունները, միասին մտածելու ու ինչ-որ բան արարելու կայքն ու պատասխանատվությունը, իրար անսահման վստահելու ու իրար հետ արդյունավետ ժամանակ անցկացնելու մորմոքը դարձավ անուն ու լոգո: Կան, չէ, տենց բնավորություններ, մարդիկ, որոնց էմոցիոնալ կառուցվածքը տարբեր ա, բայց ժամացույցի անիվիկների քյաթթիկների պես բռնում ա իրար ու պտտացնում մի ամբողջ համակարգ: Հիմա իմն ու Գոհարինը հենց տենց ա: Փողքասթի աստվածները մեր հանդես բարեգութ գտնվեցին ու ապրիլյան մի պայծառ օր ծնվեց «Ականջօղ» անունն ու մենք, որպես փողքասթ անողներ:

Գոհարը մի ինտիմ խոստովանություն ունի փողքասթ երևույթին, ու ես պետք ա պատռեն ճշմարտության դեմքն ու ամրագրեն. Գոհարն ասում ա, որ եթե կա մի բան, որի հետ ինքը կուզեր կապել իր կյանքն ու ամուսնանալ, էդ փողքասթն ա. այ էդքան խորը սեր ա զգում ձայնային էդ փառահեղ մշակույթի հանդես: Էդ մի սեր ա, որն ինձ մոտ երևի էդքան բուռն չի, բայց հաստատ կրթոտ ա: Կրթոտ սեր առ ձայնն ու պատումը: Ու մի բան էլ խոստովանությունների շարքից: Գոհարն ասում ա լուսանկարվել ու լուսանկարվելու հրավերը վիրավորանք ա իր ողջ գոյությանն ու հավատամքին: Բայց «Ականջօղն» ինձ տվեց ինտիմուցիոնալ մունձաթի արտոնություն իր դիմադրությանն ու նկարվել չուզենալուն: Դրանից հետո մենք սկսեցինք աջուձախ լուսանկարվել: «Ականջօղը» ծաղկում ա:



Հիմա փորձեմ պատմել, թե ոնց ենք ստեղծել մեր վերջին՝ «Սոլիդարությունը» որպես զենք» էպիզոդը: Օգոստոսի երկրորդ կեսին մի քանի ամսով եկա Ստամբուլ ու ինչ-որ կարճ շրջան հետաձգվեց մեր հաջորդ էպիզոդի ձայնագրումը: Հանդիպեցինք սեպտեմբերի վերջերին Մոսկվայի օդանավակայանում ու միասին գնացինք Լոս Անջելես՝ Werk It կանանց փողքասթ փառատոնին մասնակցելու, ինչի համար ահավոր ուրախ էինք ու ունեինք խվլվում, խոստոտ տվող երջանկություն, քանի որ էդ փառատոնի ժամանակ հանդիպելու էինք նաև Ռոքսան Գեյին: Մի տեսակ ռոմանտիկ ստացվեց: Ինչևէ: Մինչ իրար հանդիպելն արդեն ունեինք գուզլ դոք, որի մեջ մի ամիս շարունակ գրվում էր մեր հաջորդ էպիզոդի սցենարը: Սցենար գրելը շատ աշխատատար ու ջանքալ, բայց նաև սիրելի գործ ա: Ինչպե՛ս սկսել:

Գոհարը միշտ ասում ա՝ պետք ա պատմությունը սկսել պատմել կեսից: Բայց ոնց ամեն անգամ կառուցել պատում, հետո կիսել ու սկսել մեջտեղից: Էստեղ ա, որ օգնության ա գալիս շատ փողքասթ լսելու փորձը, կրեատիվությունն ու եղած նյութի հետ ճիշտ աշխատելու հնարամտությունը: Լսողին պետք ա միշտ անակնկալի մեջ պահել, թույլ տալ զարմանալ: Իսկ ամեն հաջորդ էպիզոդի թեման ընտրելն անհասկանալի գործընթաց ա: Մենք ունենք թեմաների ցանկ, որոնց մասին նախատեսում ենք ու ուզում ենք խոսել, բայց ընտրության որոշումը կախված ա օդում ու կապված ա մեր կյանքում տեղի ունեցածի հետ: Օրինակ՝ «Տղա ես, մի լացի» էպիզոդը ծնվեց մեր ընկերներից մեկի հետ թեժ գրույցի արդյունքում: Այսինքն փորձում ենք զգայուն լինել կյանքի նկատմամբ ու անել ընթացիկ թեմաներին արձագանքող էպիզոդներ: Էն, ինչ անհանգստացնում ա մեզ, անհանգստացնում ա նաև շատերին:



Էս անգամ աշխատում էինք կանանց սոլիդարություն թեմայի շուրջ: Եր թեման ընտրեցինք, որովհետև նախորդ էպիզոդներից մեկում մեր հերոսներից մեկը միանգամայն այլ թեմայի մասին խոսելիս ասաց, որ կանանց մեջ ոչ մի սոլիդարություն էլ չկա: Էս նախադասությունը մնաց մեր գլխում որպես բեկորային միտք, էնքան անհանգստություն տվեց, որ վերջապես տեղի տվեցինք ու սկսեցինք նախապատրաստական աշխատանքները: Նախ փորձեցինք խոսել ու հասկանալ, թե մենք անձ-նապես՝ որպես Գոհար ու Անահիտ, ինչ վերաբերմունք ունենք սոլիդարություն ասվածի հանդեպ: Հետո կարդացինք ու թարգմանեցինք Ռոքսան Գեյից մի էսսե: Գոհարը հետը տալած բերել էր Բեյլ Հուքսի մի հոդված, որը կարդում էինք, փորձում հասկանալ ու թարգմանել Գլենդելի արձարաններից մեկում՝ ստեղծից-ընդեղից գողացած ժամանակով: Ու էր ընթացքում էր, որ «Աերափմաստավորելով մարտի ուժը» խմբում թեժ քննարկումներ էին եղել Լիլիթ Մակունցի մասին հնչեցրած կարծիքի արտահայտման ձևի ու բովանդակության շուրջ: Ու մենք որոշել էինք անպայման անդադարառնալ էր գրույց-բանավեճին, քանի որ կարծում էինք, որ կարևոր են բոլոր էն խմորումները, որոնք ձևավորում են մտածելու միջավայր, բայց երկար մտածում էինք՝ ինչպես դա անել, ինչ անկյան տակ:



Եղպես մտորումներով ճամփորդեցինք Ամերիկայով մեկ՝ Լոսից հասանք Բոստոն, հետո Նյու Յորք ու ամեն տեղ քիչ-քիչ գրեցինք ու աշխատեցինք մեր սցենարի վրա: Հասանք Ստամբուլ: Ստամբուլում ունեինք երեք օր տեքստն ամբողջացնելու ու ձայնագրելու համար, քանի որ Գոհարը պետք ավերադառնար Հայաստան: Ձայնագրելու գործընթացն ինքնին շատ բարդ էր կազմակերպել, որովհետև տունը, որում ապրում էինք, ուղիղ փողոցի վրա էր, իսկ ստամբուլյան փողոցն աղմուկի թագավորությունն աս: Նախ որոշեցինք պատմել, թե որտեղ ենք գտնվում, ձայնագրել աղմուկն ու վերստեղծել ձայնային էն միջավայրը, որում գտնվում էինք: Ականջներս սրած սպասում էինք աղմուկի: Մինչև էս մյուս սենյակից կգայի, բանջարեղեն վաճառող մեքենան իր կանչերով անցավ մեր պատուհանի տակով: Թարսի պես ձայնագրիչի միացման գործընթացը երկար աստուան: Դրա համար ստիպված եղա վերցնել ձայնագրիչն ու դուրս վազել մեքենայի հետևից, որն արդեն իր աղմուկով հասել էր կողքի փողոց: Էս ձայնագրիչը ոնց որ խնդալու, փոշոտ կենդանի լինի, որը սկզբում չի գրավում մարդկանց ուշադրությունը ու մարդիկ չեն հասկանում, որ ձայնագրվում են: Հասել էի մեքենային ու էս փոշոտիկով սպասում էի, որ գոռա՝ բույրուն, բույրուն, դոմաթես բեշ լիրա և այլն: Եր սպասելու վայրկյանները տարօրինակ էին համ իմ, համ վաճառողի համար: Վերջը գոռաց: Ես, ուրախացած ու առաքելությունն ավարտած, ձայնը գրելուց հետո եկա տուն: Եր մի դարդից պրծանք, մնաց մնացածը:

Մեր էպիզոդը սկսվելու էր ֆեյսբուքյան քննարկումից մի քանի հատված ընթերցելով, որի համար մեզ տղայի ձայն էր պետք: Ինչպես ասում են՝ դե արի էս նեղ մաջալին հայերեն, էն էլ արևելահայերեն խոսող տղա գտի, խոսացրու ու ձայնագրի: Բարդ էր, մտքով անցանք բոլոր ծանոթների անուններով: Չգտանք: Նամակ գրեցինք Արեգին Առաքելյան, ուղարկեցինք տեքստը, խնդրեցինք ձայնագրել ու ուղարկել: Ըհըն: Սլեեդույշին: Հերթը հասավ մեր բուն տեքստի ձայնագրմանը: Գոհարի

գնալուն քիչ ժամանակ էր մնացել, երևի մի չորս ժամ: Պետք էր արագացնել: Գնացինք ներքին բակի կողմում գտնվող սենյակը, որը մեր ընկերուհի Վարդուհու ննջարանն էր: Կատվին վտարեցինք սենյակից, դուռը պինդ-պինդ փակեցինք, աղոթողների պես ծնկեցինք մահճակալի մոտ, որ ձայնագրման միջավայրը փափուկ լինի, ձայնագրիչը դրեցինք մեր մեջտեղում ու սկսեցինք խոսել: Մեր խոսքը մերթընդմիջ ընդհատվում էր վերևի հարևանների աղմուկ աղաղակով, որը ճանճի տզզոցի պես լսվում էր ու մեր արագ-արագ կարդալ վերջացնելու տրամադրվածությամբ նյարդայնություն բերում: Ազնիվ հավատացյալների պես ծնկի ցավերից պարբերաբար փոխում էինք մեր դիրքը ու տնքտնքում:

– Գոգ, լավ չես ասում, նորից ասա:

– Ան, էս մասը արագ ասեցիր: Մի հատ է:

Ձայնագրեցինք:

Ավարտեցինք:



Հավաքեցինք Գոհարի իրերն ու ընկանք ճամփա: Գոհարի՝ Հայաստան հասնելուն պես սկսեցինք մոնտաժային աշխատանքները: Քանի որ գրեթե միշտ մոնտաժը միասին ենք անում՝ որ մասը թողնենք, որ մասը պահենք ու տենց: Մոնտաժն արեցինք միասին՝ օնլայն տարբերակով: Մի կողմում համակարգիչն էր ձայնի պատկերով, մյուս կողմում հեռախոսը, որի վրա Գոհարի պատկերն էր, ով տեսազանգով միացել ու ինձ հուշումներ էր անում: Գիշերվա հազարն էր, վերջացրեցինք մոնտաժը: Յուրաքանչյուր մի հազար բան լսելուց հետո գտանք ճիշտ էն երաժշտությունը, որն ուզում էինք: Փորձեցինք երաժշտության ոլորտի կտրուկ ու հարմարեցնել կարդալու տեմպին՝ դադարներին, արագ անցումներին... Վերջ: Պատրաստ աս: Մնում աս ներբեռնել Վուշկա, գրել նկարագրությունը, տալ հղումներն ու ցուցադրություն 6-րդ էպիզոդ: Երևանում գիշերվա երեքն աս, Ստամբուլում՝ երկուսը, իսկ էպիզոդի երկարությունը՝ 27 րոպե, 38 վայրկյան:

Մեդիան բարձրացնում է ձայնը

Մեդիա ոլորտը նոր ֆորմայների անվերջ փնտրությունների մեջ է: Մալագիր թերթերին և ամսագրերին միացավ ռադիոն, հեռուստատեսությունը, հետո անցանք թվային դաշտ, իսկ վերջին տարիներին հայկական որոշ մեդիա ներկայացուցիչներ ճայն են ճեռել բերել՝ միանալով փողխաթինգի գլոբալ շարժմանը: Ինչ հավելյալ արժեք ունի այս ճնաչափը և որոնք են դրա առավելությունները: Ուսումնասիրել ենք հայկական մեդիաներում ծնված փողխաթները:



← EvnReport-ի գլխավոր խմբագիր Մարիա Թիթիսյանն ու Մեդիա նախագիտությունների կենտրոնի ղեկավար Նունե Սարգսյանը

Ընտանեկան լեզունը պատմում է, որ ժամանակին մեր հին տան խոհանոցի պատին կախված էր ռադիոնը դուռնից: Ամբողջ օրը միացած էր, քանի որ առավոտյան վեցի մոտակայքում եթեր էր մտնում առաջին հաղորդումը, և օրը բացվում էր: Ամեն մարդ անցնում էր իր գործին այդ ամբողջ ընթացքում ականջի ծայրով լսելով այդ նվազարկիչից հնչող խոսակցությունները: Ամեն օր հենց այդ առաջին հաղորդմանը հրավիրում էին օրինակ՝ շաբաթյին քաղաքացի Գուրգենին և քննարկում անասնապահության վերջին նորամուծությունները կամ սովետական հանրապետության քաղաքացու կերպարը: Հայաստանում թերթի ժամանակաշրջանն էր, և ռադիոն պարզապես տեղեկացված լինելու ևս մեկ հարմար տարբերակ էր: Այսպես

բոլորը իրենց տներում, եթե անգամ թերթ կարդալու ժամանակ չէին ունենում, ապա լսում էին այս գրույցները: Վերջին տարիներին այս նույն ֆորմատը ավելի ժամանակակից բովանդակությամբ և նոր անվանման տակ, վերադարձել է ասպարեզ: Աշխարհում արդեն տևական ժամանակ է, ինչ փողխաթները լայն ճանաչվածություն են վայելում՝ տալով ամսագրերին և այլ տեքստային ֆորմատներին իրենց նորովի ներկայացնելու հնարավորություն: New York Times, The Guardian, The New Yorker, Time, Forbes և շատ ու շատ այլ առաջատար մեդիա հսկաներ առանձնահատուկ ուշադրություն են դարձնում փողխաթինգի բիզնես մոդելի զարգացմանը՝ դարձնելով այն իրենց մշտական բովանդակության կարևոր ճյուղ: Բացելով The New Yorker ամսագիրը՝ առաջին իսկ էջին տեսնում ես

իրենց փողխաթային ալիքի գովազդը, իսկ բովանդակության մեջ առանձին հատված է նախատեսված հենց փողխաթային նյութերի ներկայացման համար: Քանի որ ոլորտը Հայաստանում դեռ այդքան մեծ զարգացում չի ապրել, նման բան նախաձեռնելը հայկական մեդիա դաշտի համար էքսպերիմենտի նման մի բան է, սակայն իր մի շարք առավելություններով:

Բերել նոր լսարան

«Հետքի» լրագրող Սամսոն Մարտիրոսյանի խոսքով՝ փողխաթի ֆորմատն իրենց թույլ է տալիս ավելի լայն լսարաններ ընդգրկել և չափմանափակվել միայն կատարված հետաքննական նյութերով: Իրենց ընթերցողները միջին և միջինից բարձր տարիքի անձինք են, իսկ փողխաթային ֆորմատը խոստանում է նոր

երիտասարդ լսարան ներգրավել: Նաև թույլ է տալիս քննարկման սեղանի բերել այնպիսի թեմաներ, որոնք բավարար ուշադրության չեն արժանացել կամ «Հետքի» տեքստային նյութերի ֆորմատին չեն համապատասխանում: Երբեմն որոշ հետաքրքիր մանրամասներ տեքստից դուրս են մնում և հենց այդ հատվածները տեղ են գտնում փողքաթափին եթերում: Հետաքննությունը կատարած լրագրողները պատմում են ընթացքի մասին, տրամադրում են հեռախոսազանգերի և զրույցների ձայնագրությունները, այսպես ասած՝ բեքսթեյջը:

Լսելի դարձնել հեղափոխությունը

EvniReport անգլիալեզու լրատվական կայքի գլխավոր խմբագիր Մարիա Թիթիզյանը պատմում է, որ երբ սկսում էին փողքաթափինգով զբաղվել, բնականաբար, գիտեին, որ Հայաստանում այդ մշակույթը դեռ չկա, բայց դրա հետ մեկտեղ հիշում էին, որ միշտ ունեցել ենք ռադիո լսելու հարուստ փորձառությունը: Այդպես, չվախենալով լինել առաջամարտիկներից մեկը՝ որոշեցին հայ մեդիա դաշտում նորամուծություն անել: Սկզբում բարդ էր, սկսեցին հեռախոսով ձայնագրելուց, իսկ այսօր արդեն հատուկ սարքավորումներ ունեն և առանձին մարդ, որը զբաղվում է այդ ամենով: Ստեղծում են առանձին բովանդակություն, հրավիրում հետաքրքիր մարդկանց և ամեն ուրբաթ շաբաթվա ամփոփում են հրապարակում: Բացի այդ, իրենց փողքաթափն անգլիալեզու է, ինչն այսօրվա հայաստանյան շուկայում մեծ առավելություն է: Այս ամենի արդյունքում այսօր հարյուրավոր կիսումներ ունեն, իրենց հետևող սարքավորումների թիվը եռապատկվել է: Այս ամենից զատ, փողքաթափինգի ֆորմատն իրենց թույլ տվեց Թավշյա հեղափոխության ձայնը լինել շատերի համար, ովքեր այդ խառնաշփոթի մեջ ժամանակ չէին ունենում նյութեր կարդալ:

Ավելի էժան, քան վիդեոն

Հայաստանում արընթաց տարածվում է մեկ այլ ֆորմատ՝ վիդեոն և անգամ շատ փողքաթափներ իրենց էպիզոդները տեղադրում են YouTube-ում, ինչի կարիքն արտասահմանում այլևս չկա: Regional Post ամսագրի տնօրեն Արշակ Թովմասյանի խոսքով՝ չնայած վիդեոյի ակտիվությանը Հայաստանում՝ միևնույն է գնային բավական զգալի տարբերություն կա, և դա ևս մեկ պատճառ է ինչու մարդիկ փողքաթափ տարբերակն են ընտրում, բայց լսարան ձեռք բերելու համար տեղադրում են դրանք YouTube-ում: Իր խոսքով՝ Հայաստանում դեռ չկա փողքաթափինգի բիզնես մոդել, միջոցների արդարացման գնահատում և այլն, «բայց պետք է անենք, որ տեսնենք՝ ուր կբերի», պարզաբանում է Արշակը: Դիցուք,

→ Regional Post ամսագրի գլխավոր խմբագիր Արշակ Թովմասյանն ու լրագրող Մարգարիտ Միրությունը



← Սամոն Մարտիրոսյանը՝ հերթական փողքաթափ ձայնագրության ժամանակ



↓ EvniReport-ի փողախորտ

Regional Post-ի համար փողքաթափ առավելությունն իր արդյունավետությունն է. «Այսօրվա մարդը հաճախ ժամանակ չի ունենում երկար տեքստեր կարդալ և ձայնային ֆորմատով տեղեկատվությունն ընկալելը շատ ավելի հարմար մեթոդ է, – ասում է ամսագրի տնօրենը, – Բացի այդ, փողքաթափնգում չկա սահմանափակում ոչ ժամային, ոչ բառաքանակի, խմբագրման կարիք չկա, արագրելու՝ ևս»: Այստեղ նույնպես փոխվում է ամսագրի լսարանի տարիքային միջին թիվը, քանի որ այս ֆորմատը զրավում է երիտասարդ ունկնդրին:

Լավ լրացում, բայց ոչ փոխարինում

Ազատություն ռադիոկայանին փողքաթափնգը ևս բերում է լսարանի դիվերսիֆիկացիա, այստեղ կրկին տարիքային ցենզը փոխվում է և գալիս է բովանդակային ազատությունը՝ կարող ես պատմողական ոճ թույլ տալ, երբեմն անցնել պենզային բառերի, ինչը միշտ չէ, որ կարող ես քեզ թույլ տալ այլ ֆորմատներում: Չնայած որ Ազատության բովանդակության շատ մեծ հատված ևս ձայնային է, միևնույն է, ակտիվորեն մուտք է գործել փողքաթափային դաշտ: Ազատության թղթակից Վևորգ Ստամբոլցյանի «Նորագույն պատմություն» շարքի գլխավոր նպատակը ոչ վաղ անցյալում տեղի ունեցած առավել աչքի ընկնող, երբեմն էլ արդեն մոռացության մատնված իրադարձությունները վերհիշելն է: Օգտվելով «Ազատության» 1995-2015 թվականների առաջին արխիվից, որում տեղ գտած նյութերի ընդհանուր տևողությունը գերազանցում է 7 հազար ժամը, «Նորագույն պատմությունը» ներկա-



յաջնում է այն ուղին, որ անցել է Երրորդ հանրապետությունը վերջին երեք տասնամյակներին: Վևորգ Ստամբոլցյանը, համեմատելով ռադիոն և փողքաթափը, ասում է, որ չնայած իրենց առաջին տարբերակով շատ են լսում, բայց այդ դեպքում պետք է ճիշտ պահին բռնացնես, մինչդեռ վերջին տարիներին բովանդակային տրաֆիկը հեռախոսներով է շատ անգամ զնում, ինչն էլ դարձնում է փողքաթափը երևի թե ամենահարմար միջոցը:

Անկախ ամեն ինչից, մենք դեռ երկար ճանապարհ ունենք գնալու, որպեսզի մեզ անվանենք «փողքաթափային հասարակություն», բայց պետք է հայացքը դեպի առաջ ուղղել ու պատկերացնել ապագայի մեդիա սպառումը: Մեր բոլոր զրուցակիցները միակարծիք են, որ փողքաթափ չի փոխարինի իրենց տեքստային կամ այլ ֆորմատի բովանդակությանը, բայց լավ լրացում կլինի: Ի վերջո, դուք այս ամենի մասին կարդացիք տպագիր ամսագրում:

Օդի փափրանումներ

Ինչ պետք է իմանա սկսնակ փողփափերը ճայնի մասին: Էֆսպերի-
մենքալ երաժիշտը և հնչունային ռեժիսոր Ասյ Ռաչապրյանի հետ
խոսեցինք «Աովկասյան հաճախականություններ» փողփափի,
ճայնի հետ աշխատելու առանձնահատկությունների մասին, մի էիչ
էլ ֆիլիկալից:

Աովկասյան հաճախականություններ

Օրերից մի օր ֆրանսիացի կինոռեժիսոր և ձայ-
նի ուսումնասիրող Վինսենթ Մուենը սկսեց ձա-
նապարհորդել տարբեր երկրներով և ձայնա-
գրել այդ տեղերի ազգային երաժշտությունը:
Նմանատիպ գործունեությունն ընդունված է
անվանել փանք էթնոգրաֆիա, երբ ձայնի ու
երաժշտության հետազոտմամբ զբաղվում են
ոչ մասնագետները: Մոտավորապես նույն ժա-
մանակ իմ ծանոթները Նալչիկ քաղաքից սկսե-
ցին չեչենական և չերքեզական ժողովրդական
երգերը ձայնագրել իրենց Ored Recordings լեյբլով:
Այս ամենից ոգևորված ամերիկացի Բեն Վիլե-
րը Վրաստանում կազմակերպեց Caucasian All
Frequency փառատոնը, որի հիմքում ֆոլքի և
էթնոլոգիաներով երաժշտության համատեղումն է:
Այնտեղ էլ ծանոթացանք Բենի հետ, ընկերա-
ցանք և որոշեցինք մեր փողփափն անել:
Այս պահին օրինակներ ենք անում միքսում ենք
հայկական և կովկասյան էթնիկ երաժշտությու-
նը: Հետագայում մեր փողփափի շրջանակում
ձայնագրելու ենք հարսանեկան, աշխատան-
քային և ժողովրդական երգեր: Իմ պատկերաց-
մամբ՝ վերջինի մասով կզմանք գյուղ, հարց ու
փորձ կանենք մարդկանց, երգիչ կգտնենք և
կձայնագրենք:

Մեր փողփափն արդեն երկու էպիզոդ ունի,
առաջինը վերաբերում է հոգևոր երաժշտու-
թյանը: Այս մեկի համար ծաղկաձորում պա-
տարագ ձայնագրեցի, իսկ մնացածը Բենն էր
ձայնագրել ադրբեջանական և վրացական գյու-
ղերում: Երկրորդ էպիզոդում արդեն պատրաստի
աշխատանքներ էին, քանի որ այն վերաբերում էր
ֆոլք և էթնոլոգիաներով ժանրերի միավորմանը:
Հենց մեր փողփափի ֆորմատի դեպքում որակն
առաջնային չէ, քանի որ ուզում ենք ձայնի իրա-
կան տարբերակը ստանալ: Մեզ պետք է հենց
այդ իսկականը, տեղում ձայնագրած, այն, ինչ
մենք իրականում լսել ենք հենց այդ պահին: Սա
է մեր փողփափի բուն իմաստը: Երբ ձայնա-
գրում ես դաշտում աշխատող մարդու երգելը,
այդ դաշտի ձայները նույնպես պետք է լինեն:
Կամ, օրինակ՝ եկեղեցում բավական աղմկոտ
է լինում, բայց դու չես կարող եկեղեցական եր-
գեցողությունը ստուգիայի տարբերակով ձայ-
նագրել, կամ եկեղեցում ձայնագրես առանց
մարդկանց աղմուկի: Այս դեպքում աղմուկը քեզ
տանում է, դարձնում այդ ամենի մի մասը: Դու
արդեն այնտեղ ես:

Առաջին փողփափը ծաղկա-
ջորում ենք ճայնագրել, հյուրա-
նույի համարում, խանի որ
սարուդիա չկար և պետք էր
հեղինակային մախուր ճայն
սրանալ: Մեղաշորն էի բարձ-
րապրել, կրորներով ծածկվել
էի և այնպեղից էի խոսում,
որ ճայնս հսրակ հնչի



Անպրեսանելի փափրանումներ

Առաջին հերթին պետք է հասկանալ, որ ձայնը տատանվում է: Օդի
տատանում, որը տարածվում է լույսի պես, պարզապես ի տարբերու-
թյուն լույսի՝ այն անտեսանելի է: Ֆիզիկայում կա «ռեվերբերացիա»
հասկացությունը. երբ պատերը չոր են, խոսելիս ձայնը անդրադառ-
նում է պատերից, և խոսքի պոչը երկարում է: Պետք է զնալ մի տեղ,
որտեղ ձայնը կզնա կմարի և հետ չի վերադառնա, կամ կվերադառնա,
բայց շատ թույլ: Մեկ այլ կարևոր կետ է ձայնի հաճախականություն-
ները՝ բարձր, ցածր, միջին: Օրինակ՝ մի բան շեշտելու կամ ազդեցիկ
հնչելու համար որոշ հաճախականություններ կարելի է բարձրացնել,
բայց այդ ամենը շատ ինդիվիդուալ է: Կա նաև «կոմպրեսոր» հաս-
կացությունը: Այն ձայնն ավելի հստակ է դարձնում: Եթե խոսելիս շատ
ես գլուխդ այս ու այն կողմ արել ու ձայնը բարձրացել-իջել է, կոմպրե-
սորի օգնությամբ կարելի է հավասարեցնել ձայնը: Տեխնիկական տե-
սանկյունից, օրինակ, Noise gate սարքավորումը թույլ է տալիս կտրել
ամենացածր աղմուկները: Էդիթինգի համար Sony Sound Forge ծրա-
գրով շատ հեշտ է աշխատել: Պետք է մի քիչ սովորեցնող վիդեոներ
նայել ծրագրի մասին, մի քիչ ձայնի ֆիզիկան ուսումնասիրել, իսկ մնա-
ցածն արդեն քո մտահղացումն է:

Պատերի ճայնը

Աշխատանքի բերումով Հայաստանի և Արցախի գրեթե բոլոր եկեղեցիներում ձայնագրություններ են արել: Ակուստիկ տարբերություններն ականհայտ էին: Կրկին ռեվերբերացիայի հարցն է: Եթե խոսքի դեպքում այն կարևոր չէ, ապա երգեցողության դեպքում այն պիտի ավելի գեղեցիկ հնչի և հին եկեղեցիներում ակուստիկան հրաշալի է, ձայնն ավելի երկար ու ազդեցիկ է հնչում: Սոր եկեղեցիներում նույնը չես զգա, կառուցման համար օգտագործված քարերը շատ հարթ են, ռելիեֆ չունեն և միայն անդրադարձնում են, իսկ հին եկեղեցիներում այդ փոսիկներ ունեցող քարերը ոչ միայն անդրադարձնում, այլ նաև կլանում և հավասարաչափ տարածում են ձայնը, և ամեն մի անկյունում կանգնելիս, ձայնագրելիս կարելի է յուրահատուկ ձայն ստանալ:



Պահպարան կամ վրան

Ամենակարևորը ցանկությունն է: Եթե չունես միկրոֆոն, կարելի է ձայնագրել համակարգչի միկրոֆոնով: Օրինակ՝ առաջին փողբասթը ծաղկածորում ենք ձայնագրել, հյուրանոցի համարում, քանի որ ստուդիա չկար և պետք էր հեղինակային մաքուր ձայն ստանալ: Տեղաշարժ էի բարձրացրել, կտորներով ծածկվել էի, կարելի է ասել վրան էի ստեղծել և այնտեղից էի խոսում, որ ձայնս հստակ հնչի: Մեկ այլ լավ տարբերակ է մտնել զգեստապահարան այնտեղի ակուստիկան ևս շատ լավն է: Սիրողական ռեպերների տեխնիկան է: Կարելի է նաև հեռախոսով ձայնագրել, պարզապես պիտի լուռ լինի ու զրգնող չլինի: Youtube-ով սովորեցնող դասընթացներ է պետք նայել, մշակել ձայնագրությունը, մաքրել ձայնը, էֆեկտներ ավելացնել: Այո, այդ ամենը կարելի է անել տնային պայմաններում:


Կախված ժանրից լինում է, որ հարցազրույց ես վերցնում, և այդ դեպքում կարևոր է տվյալ միջավայրի ձայներն էլ ունենալ, ինչպես, օրինակ՝ մեր փողբասթի դեպքում: Պատկերացրո՛ւ ֆուտբոլային դաշտում ֆուտբոլասեր մարդու հետ խոսում ես ֆուտբոլի մասին, միանշանակ պետք է այնտեղի կողմնակի ձայները նույնպես լինեն: Բնականաբար խոսացողների ձայները պետք է ավելի բարձր լինեն, քան շրջակա մի-

ջավայրի ձայները, բայց այն էլ է պարտադիր: Երաժշտական անցումները ևս «էքշն» ստեղծելու ձև են ազդեցիկ թվալու համար, բայց ես անձամբ դրա կողմնակիցը չեմ: Ըստ իս, խոսքի հետ զնացող ֆոնային երաժշտությունը հաճախ խանգարում ու շեղում է բուն խոսքից: Բայց եթե, միևնույն է, որոշել եք անել, ապա խմբագրման ժամանակ ձեր խոսքի ձայնագրության վրա շատ ցածր դրեք էֆեկտներն ու ֆոնային երաժշտությունը: Ռադիոյի և փողբասթի դեպքում պետք է շատ փափուկ ակուստիկ միջավայր, շատ մոտ պահած միկրոֆոն, որ ականջակալներով լսես ու մոտ լինի ձայնը, ազդեցիկ, ցանկանաս անընդհատ լսել: Խոսացողի ձայնից էլ է շատ բան կախված՝ կլսես դու այդ փողբասթը, թե ոչ. ես, օրինակ, պիտի մարդու ձայնը հավանեմ, որ լսեմ:

Իրական լավ փողբասթներ երբ լսում ենք, հիմնականում մի ամբողջ խումբ է այդտեղ աշխատում՝ առանձին ձայնային ինժեներ, ձայնային դիզայներ, նաև որակյալ ստուդիայում են դա անում: Հայկական փողբասթներ լսել եմ, լավ են արված, սառնարանի ձայնն իհարկե գալիս է, բայց դա էլ խոհանոցային խոսակցության միջավայր է ստեղծում: Գարեջուր են խմում, սեղանին դրվող գավաթի ձայնն էս լսում, և արդեն իրենց հետ նստած ես այդ խոհանոցում:

Արի ծերանանք

ԵՐԵՎԱՆԻ խնդրանիով արձակագիր, «Գրողույցալ»
փողփաթի հեղինակ Արիի Ոսկանյանը պատմվածք է գրել
21-րդ դարի կեսերին ապրող վերերան-փողփաթերի մասին:



Գոհար, ինձ մի բաժակ թեյ տուր, կոճապղպեղով:
(Լավում է շան հաչոց, ծորակից ջուր է հորդում):
Գոհարն իմ թվային ընկերուհին է, իմ աղախինը, իմ բուժքույրը: Լավ աղջիկ է, կառավարվում է ձախ դաստակիս մեջ ներկառուցված խելա-վահանակով: Սա խոսում է ինձ հետ, երբ ես ունենում եմ դրա կարիքը: Բավականին զվարճալի հիմարություններ է դուրս տալիս: (Լավում է փակվող վակուումային դռան ձայն): Ես Գոհարին անվանակոչել եմ իմ առաջին կնոջ անունով: Իսկ դու ում պատվին և ինչ ես դրել քո Մարի ռոբոտի անունը:
Դուք լսում եք «Արի ծերանանք» փողքասթը:
(Երաժշտություն):

Բարև, ժող: Նորից ես եմ... Իսկ դուք կարծում էիք Գաբրիել հրեշտակն է: (Ճիճաղ, որ փոխվում է հագի): Շնորհակալություն, Գոհար, թեյի համար և ընդհանրապես, որ դու կաս: Օրհնվի քեզ մշակողը: Ո՞նց եք, բձեք: Էսօր հոբելյանական օր է: Ուղիղ երեսուն տարի առաջ ես սկսեցի իմ էս գյալաջին: Դուք պատկերացնո՞ւմ եք՝ մենք ինչքան հին ենք: Մենք այնքան հին ենք, որ ֆեյսբուքում հաշիվ ենք ունեցել: Հեռուստացույց ենք դիտել: Ես նույնիսկ բռնացրել եմ «Երաժշտական փոստարկոյ» հեռուստահաղորդումը: Հիշո՞ւմ եք արհեստական առողջանությանը խոսող գիրուկ կնոջը... Էն որ վիրահատած քթերով, փչած շրթունք-ներով ու փիղրած ունքերով դարասկզբի ծոերի միջավայրում ասես այլմոլորակային լինեք: Արդեն տներում ինտերնետ կար, էլեկտրոնա-յին փոստ կար, մեր կյանքի մեծ մասն ինտերնետում ու սոցիալական կայքերում էինք ապրում, իսկ նա դանդաղ կարդում էր իբր թե փոստով ուղարկված նամակներ, որոնցում նամակագիրները խնդրում էին այս կամ այն երգով շնորհավորել իրենց ծանոթի տարեդարձը: Այդ թվերին փոստով նամակ ես միայն դատարանից էի ստանում: Հիմա միգուցե ես եմ իմ այս փողքասթներով նույնքան զվարճալի անախրոնիզմ: Մինչդեռ այնժամ, երբ սկսում էինք, մեզ թվում էր, թե փողքասթը մի քանի հարյուրամյակ կզբաղեցնի մարդկությանը: Բայց մարդկությունն անընդհատ նորանոր խաղալիքներ է հորինում: Ինչքան արագ է հնա-նում նորը: Նկատե՞լ եք, որ նույնիսկ երեխաներին տրվող անունները հնանում են մինչև նրանք կհասցնեն մեծանալ:
(Լավում է բացվող դռան ձայն, տիրոջը տեսած-ուրախացած շան զվարթ հաչոց, հևք):

Եկար, Բողար: Ապրի՛, ապրի՛, իմ աղջիկը, նստի՛ր, տո՛ւր թաթո՛ւ:
Լավն եմ էս ռոբոտ Ռեքսերը, ապիներ, համ լիարժեք շուն եմ, համ խնամք չեմ պահանջում, մազ չեմ թողնում, չեմ կեղտոտում: Բայց նայում եմ քեզ անդավաճան ստրուկի աչքերով: Սրանք ավելի շուն են, քան իսկական շները: Ես շատ եմ սիրում Բողարի հետ խաղալ: Անունն էլ, տեսնում եք, առաջին կնոջս անվան հետ ինչ համահունչ է: Կարճ ասած, սա գովազդ էր իմ եթերում, քաջեր: (Հնչում է երաժշտություն):

Դե՛ ինչ, տեսնում եք, որ իմ այսօրվա էպիզոդը մի քիչ տարբերվում է սովորական թողարկումներից: Իսկ տարբերվում է նրանով, որ այսօր ձեր ականջն անծանոթ քյաֆթառները չեն հարթուկելու իրենց պատմություններով, այլ ես անձամբ ու միանձնյա եմ անելու այդ գործը: Ապշելու բան է՝ ես կանգնած եմ հայկական փողքասթի ակունքներում և միաժամանակ նրա վերջին մոհիկաններից եմ: Այսօրվա պես հիշում եմ՝ ես էի, Կայն էր, Սամըր, Արեզը, Արտոն, Լիլիթը, Սյուզին... Գնացի՞նք թրեյնինգի: Եղ թվերին մի տիպի ջահելություն կար, որ էս թրեյնինգից էն թրեյնինգին էր գնում: Ենթամշակույթի պես մի բան էր, որ հայտնաբերեցի պատահաբար, ֆեյսբուքյան մի խմբում, ուր ամեն օր նոր թրեյնինգների ու սեմինարների հայտարարություններ էին դրվում: Հեղափոխությունը նոր էր եղել, ընկերներիս մեծ մասը պաշտոն էր ստացել, մյուս մասն էլ փորձում էր գտնել իրեն: Ֆինանսապես ծանր էր: Իսկ կինս գնացել էլ... Գնացել էր այլ տղամարդու մոտ: Նոր ուղիների փնտրտուքներն ինձ տարան այդ թրեյնինգներից մի քանիսին, ու ես զարմանքով հայտնաբերեցի, որ մասնակիցները նույն մարդիկ են: Դա նման էր հեռուստաշոուներում վարձկան հանդիսատես աշխատելուն, միայն թե այստեղ վարձը բնամթերքով էր տրվում՝ նախաճաշի, ճաշի ու ընթրիքի տեսքով, Երևանից դուրս լավագույն հանգստյան տներում ու հյուրանոցներում ապրելու, իրար հետ «մաֆիա» ու «այլ կերպ» խաղալու: Նաև կար պարտադիր պայման՝ մասնակիցներն անկեղծորեն հետաքրքրված էին երևում նյութով: Միգուցե նրանք նաև ինձ պես հույս էին փայփայում, որ ստացված գիտելիքը կարող է իրենց կյանքում ինչ-որ նոր էջ բացել: Սա կենսակերպ էր, որով ապրում էին այդ տարիների շատ ջահելներ: Ես նրանց անունը դրեցի սեմինարիստներ:

Սակայն փողքասթի պատմությունը մի քիչ այլ էր՝ դիմորդները շատ էին, ընտրյալները՝ քիչ: Հայտարարությունը միանգամից տակնուվրա արեց ներսս, ինչ-որ շատ զգայուն մի կետի կապով: Երկու տասնամյա-

կից ավելի էր, ինչ ինձ զբաղեցնում էր սարերի, անտառների, դաշտերի վրա սփռվող իմ ձայնի կերպարը՝ ձայնի, որ հայտնվում էր խոհանոցնե-րում ու ննջարաններում, ավտոմեքենաներում ու զուգարանում, որ բռնացնում էր մարդկանց ամենասանհարմար պահերին, և, վերջապես, որ սողոսկում էր կանացի մի զույգ ականջախեցիների մեջ երբեմն ան-միջապես ականջակալներից, իսկ ավելի հաճախ բարձր հնչում էր մեքե-նայի մեջ, ընթացքի ժամանակ, պատուհանից դուրս փոփոխվող լանդ-շաֆտի ֆոնին: Մեքենայի դեկին կանացի երկար ու բարակ մատներ էին բալագույն եղունգներով: Ես տեսնում էի սպիտակ, բոլորովին մազազերծ դաստակը՝ զարդարված երակների նախշերով, տեսնում էի արմունկի փոքր-ինչ մուգ մաշկը, տեսնում էի եռանկյուն բացվածքից երևացող կուրծքը, իսկ երբ հայացքս մի քիչ էլ էի վեր բարձրացնում, որ տեսնեմ դեմքը, այն կայծակնային արագությամբ տարալուծվում էր օդի մեջ: Ես չէի կարողանում հորինել իմ ձայնն ունկնդրող կնոջ դեմքը, ես չգիտեի ինչպիսին է այն, բայց վստահ էի, որ իմ ձայնը բերում էր նրան դեպի ինձ: Եվ կար մի ուրիշ պատկեր: Երկու հոգի՝ աշխարհից փախած ջահել ու հանդուգն երկու մարմին, սլանում էին Սահարայի անապատով ինչ-որ հաճախականության երաժշտական ելևէջների տակ, և հանկարծ ձայնն անհետանում էր, ու սկսում էին տարօրինակ ձայներ լսվել, որ հնարա-վոր չէ բառերով նկարագրել, թե ինչի էին նման: Կարդացել էի, որ Սա-հարայում ռադիոընդունիչը երբեմն որսում է Յուպիտերի մագնիսո-լրտի ձայները: Ու ինձ շատ ռոմանտիկ էր թվացել, որ երկու սիրահար, որոնց սիրուն դեմ էր ամբողջ աշխարհը, որից նրանք փախչում էին Սա-հարայի անապատով, հանկարծ կարող էին որսալ այդ տարաշխար-հիկ ձայները՝ այդքան նման իրենց սիրուն: Ահա այս երկու պատկերը միացել, նստել էին իրար վրա, և դաշտերի ու անտառների վրա սփռվող իմ ձայնը նույնացել էր այդ անբացատրելի ձայներին, որ կարելի էր լսել պատահաբար:

Հմայված ենթագիտակցությանս խորքերից կամ աստված գիտի որտե-ղից բռնած այդ պատկերներով՝ ես մի քանի անգամ հայտնվել էի ռա-դիոտանը, բայց աշխատանք ստանալ չէր հաջողվել: Բաժիններից մեկի դեկավարն ինձ մի անգամ ընկերաբար ասաց. «Որպեսզի ռադիոյում աշխատանքի ընդունվես, ինչ-որ մեկն այստեղ պիտի մեռնի»։ Այսինքն, որևէ մեկն իր կամքով ռադիոյից դուրս չէր գա: Ընդ որում ռադիոյի աշ-խատավարձերն էլ՝ ողորմելի ցածր: Ինչն էր պահում մարդկանց ռադիո-յում: Ինչ էր տեղի ունենում նրանց հետ, որ մեկ անգամ ընկնելով՝ ձայնի այդ թագավորությունը՝ այլևս չէին կարողանում դուրս գալ այնտեղից և շարունակում էին ամբողջ կյանքում աշխատել չնչին գումարով: Եվ գրողը կկի, ինչքան երկարակյաց էին:

Լսիր ինձ հիմա: Այդպես էր կոչվում փողքասթի զարգացման ծրագիրը, որ հովանավորում էր ամերիկյան դեսպանատունը: Հայտարարությունը տեսնելու ճիշտ նախորդ օրը կնոջս նույն բառերն էի ասել... Ի պատաս-խան նրա՝ «այդ մասին կխոսենք հետո, երբ հանդարտ կլինես»։ Նախա-դասությունը: (Լավում է ծիծաղ, որը փոխվում է խեղդող հազի):

– Նայիր վեր, ջահին նայիր, – խոսում է ռոբոտի ձայնը:

– Շնորհակալություն, Գոհար, ինչ էի անելու առանց քեզ:

(Եվս մի քանի անգամ հազում է):

Ես փորձում էի խոսել, իսկ նա չէր ուզում լսել: Չեմ հիշում հիմա, թե ինչ էի պատրաստվում ասել, բայց ասելիքը չէր էականը, այլ խոսելու գոր-ծողությունը: Դա անձանաչելիորեն փոփոխված սեռական ակտն էր, որ ուզում էի պարտադրել նրան: Սա բնականաբար դիմադրում էր, չէր ուզում լսել: Ես քաշքշում էի նրան, ապտակում, սարսափելի բառեր ասում: Անցորդները բռնում էին իմ թևերը, որ նա կարողանա փախչել: Բայց ես խցկվում էի տաքսու դռան արանքը ու գոռում՝ լսիր ինձ հիմա, ո՛չ, հիմա, հիմա՝ լսիր ինձ, դու պիտի ինձ լսես... Այդ բառերը ասես գրված լինեին իմ գլխի մեջ՝ մի մեծ վահանակի վրա և նեոնային լույսերով: Դա խայծն էր: Այն խայծը, որ բռնեց ինձ փողքասթի համար:

(Լավում է շան հաչոց, վակուումային դռան բացվելու ու փակվելու ձայնը):

– Արի, Արամ ջան, ներս եկ: Արի, թուշո պաչեմ: Ո՞նց ես, տղաս, ինչ ես ստացել էսօր:

– Քսանվեց, – ասում է մանկական սինթեզված ձայնը:

– Չգիտեմ դա լավ ա, թե չէ, ես գնահատման բալային համակարգերը փո-ղից արագ են ինֆլացիայի ենթարկվում:

– Դա լավ է, կարող ես հպարտանալ ինձնով:

– Դե շատ լավ, թո՛իր, պապիդ համար մի շիշ գարեջուր բեր, որ ավելի շատ հպարտանամ:

Դե գիտե՞ք Արամը թոռս է: Եվ սա գովազդ չէ: Սա այնքան լավ տղա է, որ ես նույնիսկ գործարանային անունը չեմ փոխել: Աստված գիտի, թե ինչ-պիսին կլինեի իրական, ոչ թվային թոռը, քանի տարին մեկ կգար ինձ հյուր, հավանաբար կգար ու կփորձեր իր այցը ծախել վրաս, կամ ուղիղ տեքստով փող կուզեր, կամ տնից մի բան կթոցներ: Եվ ընդհանրապես, կարող է չճանաչեի էլ նրան: Էն, որ թոռն այլևս մի բաժակ ջուր տվող

չէ (գարեջրի մասին լռեն) և որ ապագայում բոլորովին չի լինելու այդպիսին, հասկացա ղեռ մի երեսուն տարի առաջ, երևի Արփիի ու Արենի պատմությունից: Կհիշեք, պատմել եմ: Արենն ու Արփին մեր առաջին ճամբարից էին... Ողջույն հայկական փողքաթի այդ դասականներին, եթե լսում են ինձ հիմա: Նրանց փողքաթի ճամբարն էր ծանոթացրել, մեկ էլ հանկարծ պարզեցին, որ հարազատ քույր ու եղբոր թոռներ են: Մինչ այդ իրար ոչ տեսել էին, ոչ լսել իրար մասին: Դրանից մի երեսուն տարի առաջ լինել, նրանք հավանաբար մի տան մեջ մեծացած կլինեին, Արփիի երկրպագուները միգրացե կարողանային շփվել նրա հետ միայն Արենի թույլտվությունը ստանալուց հետո: Բայց ինչն էր հետաքրքիր, փաստորեն գոյություն ունի փողքաթի գեն, որ նրանց նախնուց փոխանցվել էր ղեռ այն ժամանակներից, երբ փողքաթի մասին հնարավոր չէր երևակայել:

- Գոհար, մոտ արի, ոտքերիս թաթերը մերսիր, թմրել են:
- Դու երևի կուզես, որ չխոսկան էլ լինեմ:
- (Լավում է ծիծաղ՝ սինթեզված էլեկտրոնային ձայներից):
- Վատ չէր լինի, իսկ հիմա ոտքերս մերսիր:
- Լավ: Մինչ նոր հանդիպում:

(Էլեկտրոնային ձայնը թշուրտ մարում է):

Ես չէի ուզում վերադարձնել կնոջ: Ուզում էի հասկանալ այն ցավի պատճառը, որ առաջացել էր բաժանումից: Չէ՞ որ բառացիորեն երկու ամիս առաջ նրա մարմինն իմ մեջ զգվանքից բացի այլ բան չէր հարուցում: Նա ընդամենը մի խոչընդոտ էր, որ խանգարում էր ինձ միավորվել իմ սիրո հետ: Եվ հիմա, երբ ինքը հրաժարվում էր այդ խոչընդոտը լինել, երբ լքում էր ինձ ու գնում այլ տղամարդու մոտ, իրադարձությունների այդպիսի զարգացումից երջանկանալու փոխարեն ուժեղ ցավ էի զգում: Նոր սերս մի ակնթարթում դադարեց հետաքրքրել ինձ: Իսկ երբ

է ծաղկել: Ինչ անուշ է բուրում: Եվ ո՞վ կմտածի, որ սա ծառ չէ, այլ օդից վնասակար նյութերը ֆիլտրող ու թթվածին արտադրող սարք, որ դու կարող ես զննել ու տեղադրել քո բակում: Ահա, կսեղմեն այս կոճակն ու այն կսկսի քամուց շարժվող տերևների սոսափյուն արձակել: Տերղ մեռնի, գիտություն:

Ինչո՞ւ ենք մենք հետաքրքրություններ փնտրում մեր ամուսնական տիտանիկից դուրս և մեզ չի բավականացնում մեկ սերը: Միթե դա ծերության դեմ պրոֆիլակտիկ միջոցառումների շարքից չէ՞ մեր կոիվը ծերության դեմ, որ պատրաստ ենք տալ, եթե նույնիսկ պետք լինի, զոհել կյանքը: Ինչո՞ւ ոչ, մահը կարող է փրկել մեզ ծերությունից: Հենց միայն մահն է կարող: Եվ այնուհանդերձ, եթե մահն ինձ չփրկի, և ես ստիպված լինեմ ծերանալ, ինչպիսին կլինի իմ ծերությունը: Ահա, այսպիսի մտքեր էին ինձ այցելում այն ժամանակ: Ես տեսնում էի, որ ծերերը լուսանցք են քշված: Այն ժամանակ դու չէիր կարող որևէ ծեր տեսնել որևէ փաբում, թատրոնում կամ ցուցահանդեսին: Այնպես չի, թե նրանց արգելված էր այդ տեղերն այցելել, պարզապես ընդունված չէր: Ամբողջ Երևանում նրանք ունեին միայն մի հավաքատեղի՝ Անգլիական այգին, որտեղ հավաքվում, նարդի ու շախմատ էին խաղում: Էն էլ միայն պապիկները: Մենք ծերերին թողել էինք երկու հիմնական զբաղմունք՝ մտածումներն իրենց երեխաներ-թոռների ու մեկ էլ մահվան մասին: Խոսքն, իհարկե, սիրված ու փայփայված ծերերի մասին է, որ ընտանիքներ ու խնամող ունեին: Մյուսները ստիպված էին նաև հոգալ իրենց օրվա ապրուստը՝ որը մուրացկանությամբ, որը՝ ինչ-որ անպետք իրեր վաճառելով: Մի օր ֆեյսբուքում գրեցի. «Ի՞նչ տոժալու տեղեր կան Երևանում տարեց մարդկանց համար»: Ընկերներս սկսեցին բոցվել, ոմանք առաջարկեցին պոնչիկանոցը, մյուսները խորհուրդ տվեցին եկեղեցին: Եթե մի քիչ փող ունենայի կամ ազատ տարածք, ծերերի համար ժամանցի վայր կստեղծեի: Բայց ես փող չունեի, այլ միայն ունեի փողքաթի համար պահանջվող անհրաժեշտ տեխնիկա: Ահա, այդպես սկսեցի «Արի ծերանանք» փողքաթի: Այս տարիների ընթացքում չորս հազար էպիզոդ եմ թողարկել: Ուսապարկն ուսիս գցած շրջում էի Հայաստանի մարզերով ու Երևանի թաղամասերով, գտնում ու խոսացնում տարեց մարդկանց, որոնք թարմ ականջ էին փնտրում: Թարմ ականջ ասեցի, հիշեցի իմ մի բարեկամի, որի մոտ ինձ տանում էին փոքր ժամանակ, երբ ուզում էին պատժել: Այդ մարդը, որ ինձնից մի յոթանասուն տարով մեծ էր, իր պատմությունները պատմելիս ասում էր՝ դու կհիշես պապիս ընկերոջը՝ Վաղինակին, էն որ էս էր արել, էն էր արել էն որ ձին ծախեց, եզն առավ... Այ պապի, ո՞նց պիտի հիշեմ: Դա մեզ շատ էր զվարճացնում: Անկեղծ ասած՝ ինձ հետաքրքիր էին այդ պատմությունները, բայց քանի որ ինձ այդպես պատժում էին, դա իբրև պատիժ էլ ընդունում էի ու չլսելու ձևեր որոնում: Մենք մի բան կարող էինք տալ ծերերին՝ մեր ականջները, էն էլ փոքրոգիաբար մերժում էինք: Իմ փողքաթով ես շրջեցի իրերի այդ դրությունը: Շուտով մարդիկ սկսեցին վճարել այդ պատմությունները լսելու համար: Այս փողքաթուն ինձ իսկական փողքաթի սարքեց՝ մարդ, որի աջ ձեռքին փոխարինում էր ձայնագրիչը: Փողքաթի, գիտեք, կենսակերպ է, ինչպես, ասենք, ալպինիզմը: Եվ ինձ դուռն էր եղ կենսակերպ, բձեք: Ու ինչն էր հետաքրքիր՝ «Արի ծերանանք» փողքաթն իմ գիրկը բերեց երկու երիտասարդ աղջկա: Երկուսն էլ ուզում էին ծերանալ ինձ հետ, մրցում էին, թե ով կնվաճի այդ իրավունքը: Եվ այնպես ստացվեց, որ ես երկուսի հետ էլ մի քիչ ծերացա: Հերթով, իհարկե:

(Ծիծաղ, հազ, ծիծաղ, հազ):

Պետք է ինչ-որ կերպ ամփոփել այս գլալաջին: Մեր կյանքում ամեն ինչ դառնում է աննկարագրելի, և առաջինը՝ հենց կյանքը: Մարդիկ գնալով ավելի երկար են ապրելու ու ավելի շատ ժամանակ են ունենալու ծերությունն ուսումնասիրելու համար: Ես, իհարկե, մի օր կմեռնեմ, ու ինձնից կմնա միայն իմ ձայնը՝ այս հազարավոր էպիզոդները, որոնք միգրացե ոչ ոք չլսի: Բայց ես կապրեմ առողիտֆայլի տեսքով, և եթե ինչ-որ մեկը բացի այդ ֆայլը երբևէ, նա ինձ միշտ լսելու է հիմա: Եվ հիմա՝ այս պահին, ես ուզում եմ ասել միայն մի բան... (լսվում են էլեկտրոնային ձայներ) Արի ծերանանք, Գոհար... Մեզ խաբել են, թե ծերությունն ուրախություն է: Ծերությունը մեր կյանքի պտուղները վայելելու ամենահամեղ բրջանն է: Ծերությունը նոր հնարավորություններ բացահայտելու ու բոլոր ժամանակներում եղած ճշմարտություններին մոտենալու հնարավորությունն է: Նոր ճշմարտություններ ստեղծելու: Ծերությունն ազատություն է մեր ծնողների հորդորներից, հասարակության ճշշումից, զանազան պարտավորություններից: Արի ծերանանք: Ես գիտեմ, որ հիմա, երբ ես ասում եմ այս ամենը, սա հեզմանքի պես է հնչում, որովհետև մենք բաց ենք թողել իրար հետ ծերանալու հնարավորությունը: Ես վստուցեմ ծեր եմ, իսկ դու երբեք չես ծերանա: Բայց ուզում եմ հավատալ, որ ուրիշ չափման մեջ հենց հիմա, հենց այս պահին, երբ դու լսում ես այս խոսքերը, դա արդեն հնարավոր է: Դրա համար ասում եմ՝ արի ծերանանք, Գոհար, լսիր ինձ հիմա, արի ծերանանք...



Գոհարի տաքսին վթարի ենթարկվեց, նա մի ակնթարթում դարձավ ինձ համար ամենաթանկը: Դա այն տաքսին չէր, որ հեռացրեց նրան ինձնից: Դեպքը շատ ամիսներ անց տեղի ունեցավ, բայց ինձ համար տարբերություն չկար՝ դա նույն տաքսին էր, այն տաքսին, որի մեջ ես չկարողացա խցկվել: Ինձ համար սարսափելի էր բացահայտելը, թե որքան պարզունակ ու միաբջիջ արարածներ ենք բոլորս՝ անկախ մեր ստացած կրթությունից ու կարողացած զրբերի քանակից: Սիրո մարմինն ուսումնասիրելու համար ես սկսեցի «Սիրո անատոմիա, ֆիզիոլոգիա, հիգիենա» փողքաթի: Ի դեպ, երկու տարի առաջ իմացա, որ այն ամենահայտնի փողքաթն է հայկական փողքաթների մեջ: Այս տարիների ընթացքում այն լսել է ավելի քան տասնհինգ միլիոն մարդ: Այն օրերին, երբ ես սկսում էի փողքաթը, աշխարհում այդքան հայ չէր ապրում:

Այդ փողքաթն ինձ համար հոգեթերապևտիկ նշանակություն ունեցավ: Դրա շնորհիվ ես կարողացա կանգնել նոր կյանքի շեմին: Բայց զարմանալիս այն էր, որ հենց այդտեղ հենց շեմին, կյանքն ավարտվում էր: Եվ ավարտվում էր ոչ թե ինչ-որ հոգեբանական կամ փոխաբերական իմաստով, այլ բուն ֆիզիկական: Վերջանում էր իրական ժամանակը: Ես տեսնում էի, թե որքան քիչ է մնացել ապրելու: Ինձ համակել էր ճշշող զգացողությունը, թե ավտոյով դեպի ինձ սլացող կինն իրականում ծերությունն էր: Ոչ զգլխից, ճակատագրական, վտանգավոր ու կործանիչ մահը, այլ ամենասովորական, հրապույրներից զուրկ ծերությունը:

Պատուհանիս տակ ծաղկած ծիրանենին կյանքի մշտական նորոգման խորհուրդն ունի, և սիրտս լցնում է հույսով, կյանքով, երգով: Ինչ սիրուն



((media.am/podcast))

Փողբաթների առաջին հարթակը Հայաստանում



Լսելը ցրու՞մ է վախը Ինչպես սրեղծել ապրելիկ առողիտ պատրու՞մ

Մարդիկ իրար պատրճում են բաներ վաղ ծանկությունից: Պատճելն այնքան բնական է, որ չենք հիշում, թե երբ ենք սովորել: Բայց արի ու րես, կա պատճելու արվեստ: Ասան լավ ու վատ պատճողներ և փոփոխվող չափանիշներ, խոսքի վարպետներ, հեղինակություններ և լեկցվածներ: Ինչպես պատճել, սրեղծել ճայնային պատրու՞մ, որ կատրի լսողի վրա, գուցե նույնիսկ լսողից անդին՝ կունենա հասարակական փոփոխության ապրելություն:

Ձայնային մեդիայով սրեղծագործելու իրենց գաղափարները հայաստանյի փոփաաթերներին պատճելին Մեդիա նախաճեռնությունների կենտրոնի «Լսիր ինձ հիմա» ծրագրի շրջանակում Հայաստան ժամանած ամերիկացի փորձառու փոփաաթերները: Ներկայացնում ենք խորհուրդներ նրանց դասընթացներից:



← Էրիկա Լանցը

ՈՐՆ Է ԼԱՎ ՀԵՐՈՍԸ

Այբ Սրիսկանդարաջա

Լավ հերոսը պետք է ունենա ներքին կոնֆլիկտ: Այդ կոնֆլիկտը բոլորն ունեն, լրագրողի գործն է այնպիսի հարց տալ, որ գրուցակցին ստիպի մտավոր ըմբշամարտի մեջ մտնել: Բացի այդ, գրուցակիցը պետք է վերբալացնի իր ներքին կոնֆլիկտը:

Էրիկա Լանց

Ես անում եմ պատմություններ, որտեղ կա նարատիվ կառուցվածք, նաև հերոս, որի հետ ինչ-որ բան է պատահում, և նա պետք է դա հաղթահարի: Հետևաբար ինձ համար կարևոր է զարգացնել պատմությունը: Կարծում եմ՝ լավ պատմության համար անհրաժեշտ է սափենա, որը հանգուցալուծվում է վերջում՝ հաճախ անսպասելի, և հերոսը ինչ-որ բան է սովորում, հասկանում, անում արդյունքում: Այս կառուցվածքով է պահվում լսողի ուշադրությունը: Ձայնով կարելի է խթանել լսողների երևակայությունը: Նրանք պատկերները ստեղծում են իրենց մտքում՝ ի տարբերություն հեռուստատեսության, որտեղ ամեն ինչ ասվում և ցույց է տրվում:

ՈՐՆ Է ՌԱԴԻՈՂԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԴՔԱՍԹԻ ԷԿՐԶՈՂԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Այբ Սրիսկանդարաջա

Փողքաաթում կարող ես, օրինակ, երաժշտությունն օգտագործել ավելի հեշտ ու հետաքրքիր, քան ռադիոյում: Ռադիոյում կան կանոններ, որոնք փողքաաթներում կարող ես խախտել: Հիմնական տարբերությունն ինձ համար ժամացույցն է: Ռադիոյում պետք է տեղավորվես սահմանված ժամանակի մեջ, ասենք, պատրաստել երեք ռոպեանոց ռեպորտաժ: Եվ այդ ժամանակահատվածում հասցնել ասել հիմնական կարևոր բաները:

Էրիկա Լանցն աշխատել է WBUR (Բոսթոն) հանրային ռադիոկայանում, թողնակցում է Snap Judgement փոփաաթին: Նա մասնագիտացված է նարատիվ պատմություններում: Լանցը նաև հեղինակել է Kind World-ը, որի յուրաքանչյուր էպիզոդ մի հերոսի մասին է:

Այբ Քերիերն անկախ ռադիոպրոդյուսեր է, Փիբոդի մրցանակի դափնեկիր: Միջոցի պատմությունները հեռարձակվել են This American Life փոփաաթում, իսկ 2015-ին նա սկսել է իր փոփաաթը՝ Home of the Brave:

Այբ Սրիսկանդարաջան հեղինակական Reveal փոփաաթի պրոդյուսեր է: Փողքաաթը լուսաբանում է մարդու իրավունքների խախտումների և կոռուպցիայի բացահայտման դեպքեր:

ՈՐՆ Է ԼԱՎ ՁԱՅՆԱՅԻՆ ՆՅՈՒԹԸ

Այբ Քերիեր

Լավագույն շոուները նրանք են, որտեղ ներկայացվում են հակադիր կարծիքներ այնպես, որ չհամաձայնվող կողմերը չեն սպանում իրար: Որովհետև երբ մարդիկ լսում են միմյանց, վախը վերանում է: Լսելը վերացնում է վախը: Վախը Ուրիշի հանդեպ: Ինչպես ասել է լեհ գրող Ռիշարդ Կապուսիճինսկին, երբ մենք հանդիպում են Ուրիշին, հետևյալ երեք բաներից մեկը պետք է անենք՝ պատերազմել նրա դեմ, պատեր կառուցել նրա շուրջ, կամ նրա հետ երկխոսության մեջ մտնել: Լրագրությունն այդ երրորդն է, այն երկխոսելու մասին է:

Իսկ փողքասթում կարող ես պատմությունն ամբողջությամբ պատմել այնքան երկար, որքան պահանջում է հենց պատմությունը: Ինչպես ոլորտում ընդունված է ասել, ձայնային տեսարանները հասցնում են «շնչել», ստիպված չես լինում, օրինակ, կտրել-թափել մարդու շունչը, դադարները կամ խոսքի ընդհատումները: Մարդիկ փողքասթում հնչում են բնական, ինչպես կյանքում: Կարող ես ստեղծել տեսարան, լրողին տեղափոխել այնտեղ ու սուզել նրան 360 աստիճանի ձայնային միջավայրի մեջ:

ԻՆՉՈՒ ԵՆ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՄԱՐԴԻԿ ՋԲԱՂԱՌԻՍ ՓՈՂՔԱՍԹԻՆԳՈՎ

Աքոթ Քերիեր

83 թվին, երբ ես սկսեցի աշխատել NPR-ում, այնտեղ հավաքվել էր շատ ստեղծագործ թիմ: Նրանց առաքելությունն էր պատմություն պատմելու նոր ձևեր հորինել: Հետո սկսեց կարևորվել լուրերը և ստեղծարարները հեռացվեցին աշխատանքից: Սակայն նրանցից շատերը սկսեցին իրենց դպրոցները, իրենց նախագծերը՝ փողքասթները: Այրա Գլասի, Third Coast ձայնի փառատոնի հիմնադիրների և նման այլ լավատես մարդիկ փոխանցում են ռադիոյի հանդեպ սերը երիտասարդներին, սովորեցնում են ինչպես արտադրել ռադիո: Նաև փողքասթինգի՝ նոր տեխնոլոգիայի շնորհիվ, մեծ լսարան է բացվում: Այս երկու պատճառով, կարծում եմ, հիմա կան շատ երիտասարդներ, որոնք հետաքրքրված են և նվիրված աշխատում են:

ԻՆՉՊԵՆ ՎԵՐՑՆԵԼ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Աքոթ Քերիեր

Ոչ ոք քեզ հետաքրքիր բան չի ասի, մինչև չվստահի: Ինչպե՞ս ձեռք բերել վստահություն: Ես ռադիոյի աշխարհում ունեմ լավ հարցազրույցներ ստացողի համբավ: Եվ դա ճիշտ է, ես լավ հարցազրույցներ եմ վերցնում: Իմ բանաձևը թափանցիկ լինելն է: Բարեբախտաբար, լրագրողի համար թափանցիկ, բաց, ազնիվ լինելը հեշտ է, քանի որ լրագրողի գործը հենց դա է. ճշմարտությունը պատմելը: Լրագրողը չպետք է խաբի: Մարդիկ զգում են, երբ դու ինչ-որ բան թաքցնում ես, արդյոք անկեղծ ես, արդյոք ինքնավստահ ես քո գործի մեջ, արդյոք չար ոգիներով պաշարված ես: Եղեք անկեղծ՝ ինչ նպատակով, ինչ եք ուզում իմանալ, ինչ ես անելու այդ հարցազրույցի հետ: Հարցազրույցի տարածքը պետք է հա-

→ Միոթ Քերիերը



վասար կիսես քո զրուցակցի հետ, նույնքան տեղ զբաղեցնես: Մարդիկ շատ անձնական, ինտիմ բաներ են ինձ պատմում: Ինչու, որովհետև մարդիկ սիրում են պատմել, մարդիկ ուզում են լսված լինել, հասկացված լինել: Երբ մի բան պատմում են, լավ են զգում: Ու երբ ձեզ վստահում են, չեն վախճնում, որ դու իրենց վատ կներկայացնես, կամ կաղճատես ասածը: Ասեք, որ լրագրությունը ձեր աշխատանքն է: Մարդիկ՝ անկախ մշակույթից, աշխատանքը հարգում են, և կուզեն ձեզ օգնել:

ԻՆՉՊԵՆ ԿԻՆՈՎ ՎԵՐԱԾԵԼ ՓՈՂՔԱՍԹԻ

Ալք Սրիսկանդարաջա

Փողքասթինգը հետաքրքիր դարձրեց նաև աուդիոյով աշխատող ստեղծագործական ոլորտների մասնագետների գործը: Օրինակ՝ թատերագետների, կինոգետների: Մեծ կինոթատրոններն ԱՄՆ-ում ներդրումներ են անում ոչ միայն կինո, այլև ռադիո-դրամաների արտադրության մեջ: Ասենք, սուպերհերոսների մասին շատ պոպուլյար կինոպատմությունների ցուցադրման տոմսն արժե 12 դոլար, իսկ դրանց փողքասթային տարբերակները՝ մի քանի սերիաներով պատմված, անհամեմատ մատչելի են: Փող-

քասթ են դառնում ոչ միայն պատկերապատումներն ու գրաֆիկական նովելները (Մարվելի Wolverine-ի նման), այլև սարսափ պատմությունները, թրիլերները (Homecoming-ի նման, որը հեռախոսային զանգերից կազմված հոգեբանական թրիլեր է): Ստեղծվում են փողքասթներ ֆիլմերի ստեղծագործական ընթացքի մասին: Մի խոսքով՝ ձայնը դառնում է գործիք վիզուալի համար:

ԻՆՉՈՒ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՄԱՅՆՔԸ

Էրիկա Լանց

Փողքասթերներից պահանջվում է շատ մեծ ստեղծագործականություն, որպեսզի մտածեն ու գտնեն իրենց և միմյանց լսարանն ընդլայնելու ձևեր: ԱՄՆ-ում ասում ենք՝ մեծ ալիքները բոլոր նավերին հավասարապես բարձրացնում են: Մեկ փողքասթերի հաջողությունն օգնում է մյուսներին: Նրանք առաջխաղացում են ապահովում միմյանց համար, եթե համագործակցում են և կարիք չունեն միմյանց դիտարկել որպես մրցակիցներ: Հաջողված փողքասթերների համայնքներին նույնիսկ հաջողվում է նվիրատվությամբ ֆինանսավորվել:

ՓՈՂՔԱՍԹԻՆԳԻ ԴՊՐՈՑԻ ՀԱՁՈՂՈՒԹՅԱՆ ԳՄԱՏՆԻՔԸ


Աքոթ Քերիեր

Ինձ հետաքրքիր էր, արդյոք կհաջողվի՞ մեզ թիմային աշխատել այս դասընթացի ընթացքում: Որովետև իմ փորձը ցույց է տալիս, որ ստեղծագործելը ստացվում է, երբ ներգրավված մարդիկ ներդնում են յուրաքանչյուրն իրենց տաղանդները: Կարծում եմ, ստացվեց, ուսանողները լավ համագործակցեցին և բոլորը կատարեցին իրենց հանձնարարությունները՝ յուրահատուկ ձևով: Սա միշտ չի, որ ստացվում է: Հիմա հաճախ ուսուցիչներն ու ծնողները միայն գովում են երեխաներին, ասում, որ իրենց մոտ ամեն ինչ հիանալի է ստացվում: Արդյունքում երիտասարդները պատրաստ չեն ձախողվել: Վախճնում են անգամ դժվար բաներ փորձել: Մեր ուսանողները փորձեցին ստեղծագործել: Դա լավ սկիզբ էր:

← Ալիք Սրիսկանդարաջան



🏠 Քնար Խոսրոյան
📍 Մեդիա նախաձեռնությունների կենտրոն



Ինչու է աղմկում պուլպուլակը

Նրբազգաց արվեստագետները կարող են գրնել ճայնային պոեզիա առազին հայապիւ ածենաստվորական երևույթների մեզ: Օրինակ՝ Երևանում ածեն խալափոխին հանդիպող ցայրադրյունների: Ֆրանսիայի երաժիշտ, սաունդ արտիստ Ալեքսիս Պոլը մի խանի րարի առազ սիրահարվել է դրանց շառաչունին և այս րարի պատրաստվում է սկսել պուլպուլակների ինտերակտիվ ճայնային խարտեյի նախագիծը: Ալեքսիսը պատմել է ԵՐԵՎԱՆին, թե որտեղից, ինչու և ինչպես նա լսեց երևանյան զրի ճայնը:



Առագին ալյն ու երևանյան ճայնաշերտը

2016 թվականն էր, ես անցկացնում էի մեկամյա շրջագայություն աշխարհով, որի ընթացքում ելույթ էի ունենում մի հին շարժական երգեհոնով և սաունդսքեյսեր ձայնագրում ռադիոյի համար: Իմ ստեղծագործական գերնպատակն այդ եվրոպական գործիքի թարմացումն էր: Ես ուզում էի օգտագործել երգեհոնն իբրև սուրհանդակ: Մի կողմից՝ ես անդրադառնում էի ժողովրդական ժառանգությանը, մյուս կողմից՝ փորձում էի այդպես ներկայացնել երաժշտությունն ավելի ժամանակակից, պոետիկ մոտեցմամբ: Հարավային Կովկասն ինքնին շատ հետաքրքիր ու գրավիչ տարածաշրջան էր և հատկապես Հայաստան վարդուց էի ուզում այցելել: Այս շրջագայությունն իդեալական առիթ էր:

Երևանի ձայնաշերտն անաղմուկ ու խաղաղ է: Հնչում է այնպես, կարծես ժամանակը չի շարժվում: Որպես Փարիզում մեծացած մարդ՝ ես այստեղ ինձ շատ հանգիստ էի զգում՝ ձայնային զգացումներս շատ նման էին: Լայն փողոցները թույլ են տալիս ձայներին աճել ու պարուրել քեզ: Ճիշտ է, քիչ չէ երթևեկության աղմուկը, որը միշտ աղտոտում է ձայնային մաքրությունը, բայց միևնույն է, ես երևանում կարողանում էի որսալ գեղեցիկ ձայնային մանրուքներ: Եվ ամենացնցողը պուլսուլակների մեղմ ձայնն էր: Հիշում եմ առաջին տպավորությունս, երբ տեսա. կարծես մի նախնադարյան ծիսական կառույց լիներ: Ի դեպ, երբ գալիս էի, գաղափար չունեի ցայտաղբյուրների գոյության և առավել ևս այդչափ առատության մասին: Ընդհանրապես, առաջին բանը, որ աչքովս ընկավ Հայաստանում, ջրի առատությունն էր ամենուր: Եվ շատ չանցած որոշեցի, որ պետք է ձայնագրեմ հստակ ջրի ձայնը: Իմ ուղեղում քարի և ջրի այս անվերջ շփումը հենց ինքը Հայաստանն է՝ ջրի մասին երազող քարի երկիր:

↓ Ալեխսիս Պոլն իր շրջիկ երգեհոնով



Այանիի ու հանգստության խորհրդանիշը

Քանի որ ես դաշտային ձայնագրությունների մեծ փորձ ունեի, ինձ համար շատ սովորական միտք էր պուլսուլակների ձայնագրությունն իբրև քաղաքային ձայնաշերտի կարևոր, բացառիկ դետալ: Հետաքրքիր է, որ երբ ձայնագրում ես այդ ձայնը, այն վերափոխվում է, քանի որ միկրոֆոններն այնքան մոտիկ են տեղադրում, որ ջրի ձայնը դառնում է խոշոր, բարձր, իսկ երթևեկությունը, հակառակը, անցնում է երկրորդ պլան ու կորչում ջրի տակ: Սովորական վիճակում հակառակն է՝ ջուրն է ճեղքում իր ճանապարհը մնացած աղմուկի միջով: Բացի այդ, ես իմ անձնական հատուկ վերաբերմունքն ունեմ այս ձայների նկատմամբ. ջրի շառայունն ինձ համար մշտապես կյանքի ու հանգստության խորհրդանիշն է, քանի որ ես ծնվել եմ օվկիանոսի ափին, իսկ հետո հաճույքով բուն էի մտնում անձրևի կտկտոցի տակ: Մուլ-նիսկ փոթորկի աղմուկն է ինձ ապահովություն ու վստահություն ներշնչում:


Պուլսուլակների պոեզիան

Ինչևէ, մի քանի պուլսուլակի հետ «հարցազրույց» վարելուց հետո մտքովս անցավ, որ պետք է մեծ հետազոտություն անել ու ձայնագրել բոլոր երևանյան ցայտաղբյուրներն ու ստեղծել պուլսուլակների ինտերակտիվ ձայնային քարտեզ: Հետո ճամփորդները կարող են դրա միջոցով բացահայտել Երևանը մի փոքր այլ կողմից, քան հիմա են անում: Գնալ ջրի հետքերով ու գտնել քաղաքը: Իսկ քանի որ պուլսուլակները շատ մարդամոտ, մարդկային էակներ են, որոշեցի բացի ձայներից, ամենքի շուրջ հավաքել նաև հուշեր ու պատումներ, որոնք լույս կափռեն մեր ժամանակների և այն գեղեցկացնող մարդկանց վրա:

Կարծում եմ՝ դեռ շատ սքանչելի ցայտաղբյուրներ կգտնեմ, բայց առաջիմ ձայնագրվածներից շատ եմ սիրում Արմվյան փողոցի եկեղեցու մոտ եղածը: Ինձ այդ ժամանակ օգնում էր ընկերս՝ երաժիշտ Վարդան Հարությունյանը: Իհարկե, փողոցում անսպասելի մի բան ձայնագրելը միանգամից հարցեր է առաջացնում անցորդների մոտ: Մարդիկ չեն կարող հասկանալ, թե այդ ինչ ես ուզում այն բաներից, որ ամեն օր նրանց աչքի առաջ են ու իրենց կարծիքով ոչ մի առանձնահատուկ հետաքրքրություն չեն ներկայացնում: Եվ դրա շնորհիվ այս պրոցեսն ինքնին մի հավելյալ ներկայացման է վերածվում: Անցորդները հետաքրքրվում են, վերածվում են հանդիսատեսի, քաղաքի ամենօրյա կյանքը մի փոքր շեղվում է իր ուղեծրից: Քանի որ այս նախագծի նպատակը բոլորին առնչվող ամենօրյա վիճակին պոեզիա ավելացնելն է: Արվեստը պետք է հասնի բոլորին, անկախ նրանից, թե նրանք ինքնուրույն գնում են դեպի արվեստ, թե ոչ: Ինչպես իմ շրջիկ երգեհոնը հասցնում էր երաժշտություն մարդկանց դարեր առաջ:

Երևանն իմ կյանքն է, ինչպես և իմ կյանքը Երևանն է

Լրագրող, Հայաստանի հանրային ուղիղի նախկին և Ա. Թաժմանյանի անվան
Խաղաղության պաշտպանության ազգային թանգարան-ինստիտուտի ներկայիս տնօրեն
Մարկ Գրիգորյանը Երևանի բակային կյանքի, թթենիների, երևանյան ճայների ու
հայկական ուղիղի մասին:



Երևանցի լինելն ինձ համար օրգանական է և այնքան խմբ, ինչքան որ աչքերիս գույնը, գլխիս մազերի քանակը, որ գնալով նվազում է, և ես չեմ կարող դա բացատրել։ Ես կարող եմ դա զգալ, ընդունել, ես կարող եմ գրուցել իմ զգացողությունների հետ, բայց բացատրել՝ ոչ։

Ամբողջ կյանքս ապրել եմ Մարկ Գրիգորյանի թոռը լինելու պատասխանատվությունը կրելով։ Երբ երկու տարեկան էի, այսինքն 60 տարի առաջ, այլ երկրում՝ Սովետական Միությունում, այլ հասարակությունում, այլ դարում և այլ հազարամյակում ինձ հարցնում էին «как тебя зовут?» (ես ողսախոս միջավայրում եմ մեծացել), հպարտ պատասխանում էի՝ «Марк Владимирович младший Григорян»։ Հենց այդ ժամանակվանից իմ մեջ ներդրվել, սերմանվել է պատասխանատվությունը, որը ես մինչ հիմա կրել եմ ու կկրեմ։

Շաբաթ օրերը պապիկիս հետ դուրս էինք գալիս Երևանով ման գալու։ Պապիկս կաղում էր, բայց ձեռնափայտ չէր օգտագործում և կաղալով դանդաղ քայլում էր Երևանով։ Ես էլ իր կողքն էի անընդհատ։ Եվ մեր այս շաբաթօրյա ժամանցն ինձ համար ամենաթանկն էր։ Մենք գնում էինք Երևանի պատմության թանգարան, որն այդ ժամանակ Կապույտ մզկիթի շենքում էր։ Պապիկս գնում էր թանգարանի տնօրենի հետ թեյ խմելու, որովհետև հին բարեկամներ էին, իսկ ես վազվզում էի մզկիթի բակով, թանգարանի սենյակներով։ Հինգ մատիս պես գիտեի այդ թանգարանը։ Հիմա էլ, եթե աչքերս փակեմ, սենյակ առ սենյակ կարող եմ վերականգնել այն։ Միասին գնում էինք նաև Մատենադարան։ Նա նորից թեյ էր խմում տնօրենի հետ, իսկ ես սարսափելի ձանձրանում էի այնտեղ։ Գնում էինք Սարյանի մոտ։ Պապիկս ու Սարյանն իրենց գրույցներն ունեին, իսկ ես սարսափելի վախենում էի իրենց մեծ շներից, որ իրականում շատ բարի էին։

Յուրաքանչյուր բակ Երևանում թթի ծառ ուներ։ Ինչու՞ հենց թուփ, ինչպե՞ս էր դա ստացվում՝ ես չգիտեմ։ Բայց այդ թթի ծառը միավորում էր մարդկանց իր շուրջը։ Այդ ժամանակ Երևանի կենտրոնում բոլոր պատշգամբները փայտյա էին և բաց։ Հենց այդ բակերում մարդիկ ապրում էին բակային կյանքով, որի կենտրոնն այդ թթի ծառերն էին, որ հիմա չկան։ Դրանք սկսեցին անհետանալ մոտավորապես 70-ականների սկզբից, երբ բակերում սկսեցին կառուցել բարձրահարկ շենքեր և դրանց առկայությունը սկսեց փոխել այդ բակային միկրոմթնոլորտը։ Հիմա բոլոր բակերը դարձել են կամ շինհրապարակներ նոր, բարձրահարկ շենքերի համար, կամ արդեն բարձրահարկ շենքերն են, կամ ավտոկայանատեղիներ։

Ես մեծացել եմ Երևանի ամենահետաքրքիր շենքերից և բակերից մեկում։ Մեր բակը մեծ էր, կանաչ, գեղեցիկ ջրավազան կար, որտեղ մենք ամեն ամառ երեխաներով լողանում և խնամում էինք այդ ջրավազանն ու բակը, որովհետև հասկանում էինք, որ առանց այդ խնամքի խոզանոցի կվերածվի, իսկ մենք չէինք ուզում խոզանոցում անցկացնել մեր կյանքը։

Մեր շենքը կոչվում էր «մասնագետների շենք»։ Իմ երիտասարդության տարիներին կարելի էր նստել տաքսի ու ասել ինձ տարեք մասնագետների շենք ու տաքսիստները տանում էին։ Այն Մոսկովյան և Տերյան փողոցների խաչմերուկում է գտնվում, գեղեցիկ, մոխրագույն, պլանազարդ շենք է և այդպես է կոչվել, որովհետև, երբ կառուցվեց, այն բնակեցրին հայկական էլիտայի մի մասով։ Այնտեղ էին հայտնի գիտնականներ, նկարիչներ, բժիշկներ, կոմպոզիտորներ, ճարտարապետներ, քաղաքական գործիչներ։

Հիմա փոխվել է վերաբերմունքը Երևանի հանդեպ։ 60-ական, 70-ական թվականներին մենք դեռ ապրում էինք ստեղծվող, մեծացող, աճող քաղաքում։ Մենք հպարտանում էինք, որ Երևանի աճի տեմպերը գերազանցում էին Նովոսիբիրսկի և Սվերդլովսկի աճի տեմպերին, և այլն, և այլն։ Մենք հպարտանում էինք, որ Երևանում կառուցվում էին նոր գործարաններ, որ Հայաստանի տնտեսությունը զարգանում էր մեծ տեմպերով և որ մեքենաշինություն ունեինք։ Այժմ մեր հպարտության աղբյուրը փոխվել է։ Հիմա մենք ավելի շատ հպարտանում ենք Երևանի հին թաղամասերով։ Այն ժամանակ հին թաղամասերը ոչնչացվելու առարկա էին, ասում էին՝ ինչպես կարելի է ապրել այդ պայմաններում, այդ շենքերում։ Իսկ հիմա մենք մտածում ենք, թե ինչպես կարելի է պահպանել Կոնդը, որովհետև Կոնդը փաստորեն հին Երևանն է։ Այն ժամանակ Կոնդն ընդունվում էր միանշանակ որպես ամոթ, որը պիտի վերացվի օր առաջ, որովհետև սոցիալիստական քաղաքին հարիր չէ այդպիսի թաղամաս։

Երբ Լոնդոնում էի, Երևանի մթնոլորտն էի կարտում իր տհաճություններով հանդերձ։ Ատում էի երևանյան կինոթատրոնների տոմսի հերթերը։ Ճանապարհորդություններն ավտոբուսից տրոլեյբուս, տրամվայից ավտոբուս, իմ կյանքի ամենավատ հիշողություններ են, բայց դրանք ևս կապված են Երևանի հետ և դա նշանակում է, որ Երևանը չի կարող լինել միայն լավը։ Երբ հիշում եմ, հասկանում եմ, որ այն կյանք է, այն իմ կյանքն է։ Երևանն իմ կյանքն է, ինչպես և իմ կյանքը Երևանն է, չնայած որ ես 10 տարուց ավելի ապրել եմ Լոնդոնում։

Երևանյան մի ձայն կա, որ ես էլ երբեք չեմ լսի։ Այն էն աղբի մեքենայի զանգն է, որով կանչում էին բոլորին, որ աղբը բերեին թափելու։ Ճոռացող, մի քիչ գուցե ձաքած ձայն էր՝ ծրլընգ-ծրլընգ-ծրլընգ։ Երբ էլ որ լիներ, պիտի շուտ կոշիկներդ հագնեիր, աղբի դույլը վերցնեիր ու դուրս գալիր, ուշացար, ուրեմն աղբը մնաց, վերջ։

Ամառային երեկոներին մի պահ կա, երբ արևն արդեն մայր է մտել, բայց դեռ լույս է և արդեն շոգ չի։ Այ այդ պահին ծիծեռնակների ձայնն ինձ համար երևանյան ձայն է։ Հիմա քիչ են ծիծեռնակները քաղաքում, ագռավներն են շատ... Նաև շատ հարազատ է «դանակ-մկրատ սրեն, դանակ-մկրատ» բացականչությունը, հետո կանաչի ծախողներն էին գալիս բակերով պտտվում։ Էս վերջերս միայն ժավելի սպիրտ են վաճառում։

Ամեն առավոտ ռադիոն միացրած էր խոհանոցում նախաճաշի ժամանակ, երբ ես պատրաստվում էի դպրոց գնալ։ Առավոտյան մարզանք էին հաղորդում. «Մեկ-երկու-երեք-չորս, գլուխը բարձր, ծնկները վեր»... Բայց դրա տակ գնում էր դաշնամուր, ու այդ դաշնամուրն այնքան լավ ջազ էր նվագում։

Ջարթնում էիր, ռադիոն պիտի միացնեիր։ «Պիոներական լուսաբացը» ինձ հետաքրքիր էր, որովհետև ես պիոներ էի, բայց ես այն լսել չէի կարող, որովհետև պիտի շտապ գնայի դպրոց ու այն միշտ կիսատ էր մնում։ Կար նաև «Բարի գիշեր» երեկոյան հաղորդումը, որը ևս, որպես կանոն, ինձ չէր հաջողվում լսել։ Բայց երբ ես արդեն 10 տարեկանից մեծ էի, կար մի հաղորդում, որ կոչվում էր «Մեկ ժամ միայն էստրադա»։ Դպրոցից շտապ-շտապ գալիս էի, որ շուտ միացնեի։ Այդ ժամանակ ժամանակակից երաժշտությունը մեզ համար բաժանվում էր երկու մասի՝ մի մասը Սովետական Միությունում թույլատրված երաժշտությունն էր, մյուս մասը՝ արգելված։ Եվ այդ հաղորդման ժամանակ մեկ երրորդից մինչև կեսն արգելված երաժշտությունն էր։ Ես լսում ու վայելում էի։ Էն էր, ինչ հիմա կոչվում է փոփ, իսկ էն ժամանակ՝ էստրադա։

Ինձ համար շատ անգամ ֆուտբոլը հասանելի էր ռադիոյով։ 7-րդ դասարանում էի. «Արարատի» ամենածաղկուն տարիներն էին։ Մենք տղաներով զբաղվեցինք ռադիոյի գործով։ Ես պիոներ պալատ չէի գնում, բայց ունեի իմ ռադիոյի ուսուցիչը։ Եվ սկսեցինք հավաքել փոքր ռադիոընդունիչներ։ Հզորությունը ցածր էր և մենք ունեինք ինքնաշեն ականջակալներ։ Դասերի ժամանակ ռադիոընդունիչը դնում էինք նստարանի մեջ, ականջակալների երկար լարը շորերի տակով անցկացնում, դնում էինք ձեռքի արի մեջ, դնում էինք ականջներիս ու թաքում լսում՝ ուշադիր նայելով ուսուցչին։ Դա կատարվեց այնքան ժամանակ, մինչև «Արարատի» խաղերից մեկի ժամանակ դասարանի 3-4 տարբեր կետերից լավեց՝ գոյ...



Ռադիոն իր առաջին տարիներին ցույց էր տալիս, որ մենք քաղաքակիրթ երկրում ենք ապրում, որ Սովետական Հայաստանը վերածնունդ է ապրում, որ Ցեղասպանությունից հետո հայերը նորից կարողանում են փլատակների տակից դուրս գալ և ապրել։

Արցախյան պատերազմի տարիներին մի տարի անջատեցին ռադիոցանցն էներգիա խնայելու համար, ու բոլորը մնացին առանց ինֆորմացիայի։ Բայց այդ տարիներին էլ ամեն օր առավոտյան միացնում էինք հայկական ռադիոն։ Մենք լսում էինք, թե ինչ է կատարվում Արցախում, բայց դեռ սովետական մոտեցումներն ուժեղ էին և ոչ միշտ էր ամբողջական ինֆորմացիան մեզ հասնում։

Ես զբաղվել եմ փողքաաթինգով 2008-2009-ին, դեռ BBC-ում, երբ այդ երևույթը նոր էր ձևավորվում։ Բայց այդ գաղափարն ավելի հին ծագում ունի, այն գալիս է Radio on Demand-ից, երբ ծրագրերը կարելի էր լսել ոչ թե այն ժամանակ, երբ դրանք եթերում են, այլ երբ ուզում ես՝ կայքում։ Իսկ հետո ծառայությունը զարգացավ և վերածվեց առանձին ժանրի՝ փողքաաթի։ Մեր աչքի առաջ՝ սոցցանցերի զարգացման հետ մեկտեղ, փողքաաթները ստացան նոր տեխնիկական հնարավորություններ, ու հիմա արդեն շատ ավելի մեծ ժողովրդականություն են վայելում։

Օտարախոսները

Փողխասթների օվկիանոսում կողմնորոշվել փորձող նորեկներին օգնելու համար բազմաթիվ հոդվածներ, ռեյթինգներ, ռեվյուներ են հայտնվում, իսկ բուն փողխասթների թիվն անողոխաբար աճում է օրեցօր: Փորձե՛ք որոնել և կկորե՛ք վեբի անձայրածիր օվկիանոսում: Այսպեղ կներկայացնենք մի խանի կարևոր փողխասթ, որոնք ոչ միայն հազոդվել են, այլև մասնակցել են նոր մեդիայի բնորոշման և սահմանման վրա: Վարահորեն կարող ե՛ք գրանցվել, խաչել ու լսել:



This American Life

1990-ականների ամերիկյան ազգային ռադիոյի (NPR) հեղինակ Այրա Գլասը դարձավ ռադիոյի մեծագույն աստղերից մեկը: 1995 թվականին Գլասը ստեղծեց This American Life («Այս ամերիկյան կյանքը») ռադիոհաղորդումը, որն այժմ հեռարձակվում է ԱՄՆ-ի ավելի քան 350 ռադիոկայաններով: 2006 թվականից այն հասանելի է նաև փողքասթի ձևաչափով: Peabody, Edward R. Murrow Award և այլ հեղինակավոր մրցանակների արժանացած այս փողքասթի յուրաքանչյուր էպիզոդ՝ հաղորդում, ունի թեմա՝ կազմված 3-4 պատումից, որոնք Գլասն անվանում է «տեսարան»: Թեմաները բնավ կախված չեն լրահոսից, դրանք կամայական են՝ բուլիինգը դպրոցում, կյանքը խրոլ աշխատանք, պատերազմի ռադիո և այլն: Տեսարաններն ինքնաբավ, հաճախ առաջին դեմքով ներկայացվող պատմություններ են՝ արտադրված անկախ լրագրողների կողմից:

This American Life-ն այժմ ունի ավելի քան 380 էպիզոդ, յուրաքանչյուր էպիզոդ ներբեռնվել է միջինը 3,6 միլիոն անգամ: Ավելորդ չէ նշել, որ This American Life-ն է արտադրել Serial-ը, որը պատմության մեջ ամենաշատ ներբեռնված փողքասթներից մեկն է (80 միլիոն՝ 2016 թվականի դրությամբ): Սա հետաքննական պատմություն է (2014), որը պատմում է 1999 թվականին Բալթիմորում սպանված կորեացի-ամերիկացի աղջկա առեղծվածային գործի հետաքննության մասին:

The Truth

Ձայնը դարձել է գեղարվեստական ու փաստագրական խառնելու ամենատարածված մեդիան: Ժանրի ամենավաղ օրինակներից մեկն է 2012 թվականի լավագույն մշակութային փողքասթը ճանաչված The Truth շարքը: Պրոդյուսեր Ջոնաթան Միչելը կրթությամբ երաժիշտ է, երազել է ֆիլմեր նկարել: Թանկ ֆիլմարտադրության ոլորտ մտնել չի ստացվել, և նա սկսել է «ականջի համար ֆիլմեր» ստեղծել: Միչելն աշխատում է իմպրովիզացիոն թատրոնի դերասանների, դրամատուրգների, երգիծաբանների, լրագրողների թիմով՝ ստեղծելով մինչև կես ժամանոց գեղարվեստական պատումներ՝ կատակերգություն, դրամա, գիտաֆանտաստիկա: Ամեն էպիզոդի սցենարը գրելուն տրամադրում են մեկ ամիս, դերասանները սցենարի շուրջ իմպրովիզներ են անում: The Truth-ի առաջին էպիզոդը կոչվում է Moon Graffiti, որը Apollo 11 տիեզերանավի լուսին ուղևորվելու մասին է: Սցենարիստները պատկերացրել են տիեզերագնացներ Նիլ Արմսթրոնգի և Բազ Օլդրինի երկխոսությունը, եթե թոխքն ավարտվեր անհաջողությամբ:



The Joe Rogan Experience

Սա ամենահայտնի և յուրօրինակ փոդքասթներից մեկն է: Այն ունի ավելի քան 7 միլիոն բաժանորդ, էպիզոդները միջինն ունեն 2 միլիոն դիտում: Ո՞րն է Ռոգանի հաջողության գաղտնիքը: Երևի թե այն, որ մոտ երկու ժամ տևող հարցազրույցներն այդքան էլ հարցազրույց չեն: Նա զրուցում է, խոսում նաև իր կյանքից, կարծիքից. եթե դուք նայել եք գեթ մեկ էպիզոդ, դուք կիմանաք, որ Ռոգանը զբաղվել է մարտարվեստով, հետաքրքրվում է փսիխոդելիկներով, չի սիրում մեդիա պատերազմները և սիրում է Ջիմի Հենդրիքսին:

Բնութագրական է, որ JRE-ի հյուրերը հաճախ հակասական կերպարներ են, որոնցից պոլիտիկոսական մեդիան խուսափում է: Այսպիսով հաղորդման լսարանը լայն է և ներառում է հակասական քաղաքական հայացքներով մարդկանց: Ինչի շնորհիվ էլ, օրինակ, սոցիալիստ Բեռնի Սանդերսի համար JRE-ում հայտնվելը յուրօրինակ քաղաքական քայլ էր, որով նա իր ասելիքը հասանելի դարձրեց նաև պահպանողականներին: Ռոգանի հաղորդումներում իմպրովիզներ հաճախ են լինում, ամենահայտնին հետևյալն է. Իլոն Մասկը Ռոգանի հետ զրույցի ընթացքում ծխել է մարիխուանա: Էպիզոդն ունի ավելի քան 28 միլիոն դիտում, իսկ գլխավոր կադրերը դարձան մեծ ու սկսեցին ապրել իրենց առանձին ինտերնետային կյանքով:



Song Exploder

Թվում է, թե «մի երգի պատմություն» ժանրն արդեն միլիոն ձևով ծեծվել է, բայց ահա նոր փոդքասթ, որի էպիզոդները լսում ես մեկը մյուսի հետևից: Song Exploder-ը հրավիրում է երաժիշտներին մասնատել իրենց երգերը և պատմել դրանց պատմությունները: Փոդքասթի հեղինակ Հրիշկեշ Հիրվելը հրավիրում է երաժիշտներին իր ստուդիա, որտեղ նրանք խոսում են առանձին երգերի մասին՝ կիսվելով երգի պատմությամբ և տեխնիկայով:


Փոդքասթը հիանալիորեն կոտրում է այն պատկերացումը, որ ստեղծագործական գործընթացը կախարդանքի է նման և զուտ ոգեշնչանքից է կախված: Լսողն ունի հնարավորություն՝ հետևելու ստեղծագործական գործընթացի նրբություններին և տեսնելու երգի ամեն հատվածի հետևում ինչ միտք կա: Սակայն սա չի նշանակում, որ փոդքասթն էմոցիոնալ չէ: Լսողը նաև ծանոթանում է երաժշտություն գրելու զգացական ասպեկտին՝ անձնական պատմություններից մինչև հանրային խնդիրներ, որոնք ստիպում են երաժիշտներին ազդվել, ծիծաղել, լացել և այլ ամենն արտահայտել իրենց արվեստի միջոցով:



Reply All

Reply All-ը հայտնի Gimlet Media նախաձեռնված փոդքասթների պրոդյուսերական ստուդիայի նախագծերից է: Պաշտոնական նկարագիրն ասում է, որ Reply All-ն այն մասին է, թե ինչպես են մարդիկ հղկում ինտերնետը և ինչպես է ինտերնետը հղկում մարդկանց: Սակայն հենց փոդքասթի հեղինակներն էլ Ալեքս Գոլդմանն ու Փիջել Վոթն ասում են, որ իրենց աուդիոպատմությունները դուրս են գալիս այս նկարագրի սահմանից:

The Guardian-ը գրում է, որ Reply All-ն իրականում ժամանակակից մարդու կյանքի և գոյատևելու անսխալ և յուրօրինակ ուսումնասիրություն է: Լսելով Reply All-ը՝ դուք կտեսնեք դեռահաս հաքերների պատկերներ, շնչկատանից ինտերնետային խաբեություններ անող մարդկանց, կիմանաք Նյու Յորքի ոստիկանական դատաբազայի պատմությունը, կհասկանաք որոշ մեմերի իմաստը և կլսեք սովորական մարդկանց կյանքի պատմություններ: Reply All-ը թողարկել է 150 էպիզոդ և շարունակում է պատմություններ պատրաստել միջինն ամիսը երկու անգամ: Ինչպես գրում է Vulture ամսագրի լրագրող Նիկ Քուան՝ Reply All-ը փոդքասթ է, որը պատմում է հիմնալի և շատ մարդկային պատմություններ՝ տեխնոլոգիաներով համեմված:



Home of the Brave

Սքոթ Քերիերը ռադիոպատմություններ է ստեղծում ավելի քան 35 տարի: Նրա կարիերան սկսվել է շատ պատահական. 1983 թվականին իր ծննդավայր Սոլթ Լեյք Սիթիից Սքոթն ավտոստոպով եկել է Վաշինգտոն՝ NPR-ի գրասենյակ: Ճանապարհին իրեն ուղեկցող վարորդների հետ զրույցները դարձել են Սքոթի առաջին ռեպորտաժը: Սքոթի պատմությունները հետաքննվել են հայտնի ամերիկյան ռադիոշոուներում (օրինակ՝ This American Life-ում): Իսկ 2015 թվականին Քերիերը սկսեց իր հեղինակային փողքաթիվը՝ Home of the Brave-ը («Խիզախների տունը» տողն ԱՄՆ օրհներգից է): Հեռարձակվող հաղորդումները տարբեր ձևաչափեր ու թեմաներ ունեն:

Այժմ Սքոթը սկսել է շարք՝ «ուրիշի հետ խոսելու» մասին: Այս շարքում նա հարցազրույցներ է անում իրենից ռադիկալ տարբեր հայայցներ ունեցող մարդկանց հետ: Home of the Brave-ը քիչ փողքաթիվից է, որ գոյատևում է բացառապես լսողների նվիրատվությունների հաշվին: Նշենք, որ Սքոթ Քերիերը 2019 թվականի նոյեմբերին Հայաստանում էր: Մեղիա նախաձեռնությունների կենտրոնի «Լսիր ինձ հիմա» ծրագիրը փողքաթիվն էր դարձրել մասնակիցներին սովորեցնում էր աուդիո պատմություններ ստեղծելու իր գաղտնիքները:

Ռուսական փողքաթիվներ

2019 թվականին փողքաթիվները դարձան նաև ռուսալեզու մեդիայի անբաժանու կարևոր մաս: Սակայն առայժմ ռուսերենով փողքաթիվները, որպես կանոն, շարունակում են մնալ զրույցի ձևաչափում, երբ մի քանի զավգակներ զրուցում են որոշակի թեմայից: Սակայն անցյալ տարի շուկայում հայտնվել են մի քանի ավելի հավակնոտ նախագծեր՝ բարդ նարատիվներ, աուդիո-սերիալներ (Голос зомби), պատմական որոշակի դրվագների մասին սերիալներ (Норд-Ост., Шурани) և true crime ժանրերում (Эта реальная история):

Ռուսական անկախ լրատվության առաջատարներից մեկը Meduza-ն, մի քանի տարի առաջ սկսեց ակտիվ զբաղվել փողքաթիվներով՝ ստեղծելով միանգամից մի քանի շարք՝ սեփական տեքստերի քննարկումներ, ընթերցողների հետ հարց-պատասխաններ, գրականություն և կինո, և այլն: Իսկ գիտակրթական ոլորտի ռահվիրա Arzamas-ը փողքաթիվ ձևաչափով հասանելի դարձրեց իր տասնյակ դասախոսությունները (դրանց մի մասը, ավաղ, վճարովի է):

Եթե սիրում եք ռուս գրականություն, հաճույքով կլսեք «Полка» փողքաթիվը՝ կարևորագույն ռուսական գրքերին նվիրված համանուն նախագծի ձայնային հավելվածը: Խմբագրության խոհանոցում հաճախ սկսվող խոսակցությունները հեղինակները որոշեցին փողքաթիվով ևս հասանելի դարձնել լսարանին: Խմբագիրներն իրենց քննարկումներին հաճախ հրավիրում են այլ «կարդացածների»: Ջրույցներն ավելի անմիջական են. խմբագիրներն ու հյուրերը ոչ միայն խոսում են դասականներից, այլև քննարկում են ինչպես կարդալ դասականներին հիմա, ինչ քաղաքական մեկնաբանություններ են ձևավորվել Սոլժենիցինի շուրջ, արդյոք #Metoo-ի դարում «Լոլիտան» լույս կտեսներ:



Radiolab

2002 թվականին հորինված այս նախագիծը հավակնել է փոխել աուդիոյի սպառման ձևը: Եթե FM ռադիոն կարելի է լսել պասիվ անելով տնային գործել կամ մեքենա վարելով, ապա Radiolab փողքաթիվ ռեպորտաժների դեպքում այս պասիվ մասնակցությունը բավարար չէ: Ռեպորտաժներն այնքան հարուստ են, որ կապահանջեն ձեր ամբողջ ուշադրությունը: Բայց դուք կսովորեք բաներ, որոնք այլապես չէիք իմանա: Radiolab-ն ուսումնասիրում է ամենատարօրինակ երևույթները: Գիտությունը լայն հասարակությանը հասանելի դարձնելու համար մրցանակների արժանացած փողքաթիվ հաջողության գաղտնիքն հետևյալն է. խոր և բազմակողմանի հետաքննություն, հարցազրույցներ ոլորտի լավագույն գիտնականների հետ, թեմատիկ հերոս և նրա անձնական պատմությունը, մտածված սցենար, ձայնային հարուստ էֆեկտներ և ձայնային տեսարաններ:





Լավագույն հայկական փոդքասթերը մի հարթակում

Արի քանդակ լսենք

Ի՞նչ է խանդակը: Դասական իմաստով այն կերպարվեստի տեսակ է, որի հիմնական արտահայտչամիջոցներն են ծավալը, նյութն ու ֆակտուրան, սակայն ժամանակակից արվեստը մի փոփոխական աշխարհում ունի. խանդակը կարելի է նաև լսել:

Սառնոց արտը կամ ձայնային արվեստը միջոցառումներ արվեստի ուղղություն է, որի հիմնական արտահայտչամիջոցը ձայնն է: Ձայնային արվեստի տարածված տեսակներից են ձայնային քանդակը, ձայնային ինստալյացիան և սաունդսքեյփը: Այս արվեստը նախատեսված է հավասարապես թե՛ լսողական և թե՛ տեսողական ընկալման համար և դրանով զբաղվում են կամ քանդակագործները, կամ էլ երաժիշտները: Սա ժամանակակից և վիզուալ արվեստի միջանկյալ ձև է, որտեղ քանդակը կամ գեղարվեստական օբյեկտի ցանկացած ձև որոշակի ձայն է արձակում, որի առկայությունը թույլ է տալիս ընդլայնել քանդակի հետահար ազդեցության շառավիղը: Ձայնային քանդակներն առանձնանում են ընդգծված ինտերակտիվությամբ: Դրանք պահանջում են ոչ միայն ակնատես, այլև ունկնդիր: Հաճախ կցված բարձրախոսների կամ հեռախոսների, wifi-ի կամ bluetooth-ի միջոցով դիտողն ուղիղ իմաստով հարաբերվում է քանդակի կամ ինստալյացիայի հետ: Ձայնային քանդակներից շատերը փոխազդեցության մեջ են բնության ուժերի քամու, անձրևի, ծովի հետ որոշակի ձայն ստանալու համար: Ձայնային քանդակներն ու ինստալյացիաները հաճախ նպատակ ունեն նոր շունչ հաղորդել «շվայրերին», լցնել այդ տարածքները կորսված հմայքով և նպաստել երբեմնի սոցիալական կապերի հաստատմանը տվյալ վայրի հետ: Ձայնային արվեստի տարածման մակերեսը չունի հստակ սահմաններ և, այդուհանդերձ, ձայնային քանդակը գծանշում է այդ տարածքները իբրև արվեստի տարածքներ և կտրում դրանք առօրեականությունից: Դրա առկայությունը խաթարում է կյանքի բնականոն ընթացքը, ստիպում ուշադրություն դարձնել քանդակին, ակնաչ ղնել ձայներին և դրա միջոցով նաև նկատել շրջակա աշխարհը և մարդկանց: Այս կերպ ձայնային քանդակները նպաստում են հանրային տարածքներում հաղորդակցման առկայությանը տեսնելու և լսելու միջոցով: Դրանք ունակ են հասարակ տարածքը վերածելու կոլեկտիվ կեցության վայրի և քաղաքային տարածքների ակուստիկ դիզայնի հիմնադրի տարբերակներ են: Մեծապես կախված լինելով տեղից՝ (քամու առկայություն, ծովի ալիքների անհրաժեշտություն և այլն)՝ ձայնային քանդակների հիմնադրի օրինակներ կան աշխարհի տարբեր քաղաքների յուրահատուկ անկյուններում:



1

Երգող-զնգացող ծառ, Բրնձի

Հեղինակ՝ Մայք Թոնիին:

Երեք մետր բարձրություն ունեցող այս ձայնային քանդակը բաղկացած է միմյանց զոդված տարբեր երկարության պողպատե խողովակներից և ունի անցքեր ստորին հատվածում: Քամու առկայության դեպքում քանդակը խորհրդավոր ձայներ է արձակում մի քանի օկտավաներում: Քաղաքային միջավայրից հեռու տեղակայված այս քանդակը հետաքրքիր աուդիո և վիզուալ նկարագրով է օժտում տեղանքը: Այն չորս քանդակներից բաղկացած «Պանոպիկոս» շարքի մի հատված է և ռեզենդերացման նախագիծ է՝ իրականացված Արևելյան Լենքաշիրի Շրջակա միջավայրի արվեստի ցանցի կողմից (ELEAN):





2

Ծովային երգեհոն, Ջադար

Հեղինակ՝ Նիկոլա Բաշիշի

Ծովային երգեհոնը գտնվում է ափամերձ Ջադար քաղաքում՝ հենց ծովի ափին։ Բաղկացած է երեսունհինգ երգեհոնային խողովակներից, որոնք թաքնված են բետոնե աստիճանների տակ և տանում են դեպի ափ։ Ալիքների անվերջ շարժի և քամու շնորհիվ դրանք տարատեսակ ձայներ են արձակում, որ շատ մոտ են երաժշտությանը։ Ափի երկայնքով քայլելիս օրվա տարբեր ժամերի կարելի է նկատել դրանց փոփոխությունը։

3

Ալիքային երգեհոն, Սան Ֆրանցիսկո

Հեղինակներ՝ Պիլեր Ռիչարդս և Ջորջ Գոնսալես

Ծովամատուցում գտնվող այս ձայնային քանդակը բաղկացած է բետոնից պատրաստված քսանհինգ խողովակներից, որոնք տեղակայված են տարբեր բարձրության վրա։ Դրանց ավելի նեղ վերջավորությունն ուղղված է դեպի ծովամատուցը, ավելի լայն մասը՝ դեպի ծովը։ Մակընթացությունների, բարձրացող ու իջնող ալիքների և օդի շարժի շնորհիվ այդ խողովակները հետաքրքիր ձայներ են արձակում։ Դրանք բլթբլթում են կամ ոռնում։ Այդ ձայները բավական թույլ են լսվում՝ այցելուններին ստիպելով լրել ու լսել ալիքների ստեղծած երաժշտությունը։



4

Ուժեղ մակընթացության երգեհոն, Բլեքփուլ Վեդինակներ՝ Լիամ Քուրյրի և Ջոն Գուդինգ:
Այս ձայնային քանդակն ունի 15 մետր բարձրություն: Այն «Մեծ զբոսանքի շոու» քանդակների շարքի մաս է կազմում: Ուժեղ մակընթացության ժամանակ ահագնացող ջրի հոսքն օդը վեր է բարձրացնում դեպի քանդակը և պատճառ է հանդիսանում, որ երգեհոնային խողովակները ձայն արձակեն: Այդ ելևէջները լսելու լավագույն ժամանակն ուժեղ մակընթացությունից երկուսից երեք ժամ առաջ կամ հետո ընկած ժամանակահատվածն է: Շատ խաղաղ օրերին երգեհոնը լուռ է մնում:



5

Ձագարի պատ, Դրեզդեն

Վեդինակ՝ Անեթ Պատու
Ձագարի պատը ճարտարապետության մաս է: Մեծ, բազմահարկ կապույտ ներկված կառույցի արտաքին պատին տեղադրված են մի շարք մետաղե խողովակներ և տարբեր չափերի ձագարներ, որոնք երաժշտություն են նվագում, երբ անձրևաջրերը հոսում են տանիքից ցած: Դրանց ելևէջները միանգամայն տարբերվում են այլ քանդակների քամու միջոցով ստացված ձայներից և, ինչքան էլ զարմանալի է, ուսանողական թաղամասի այդ շենքի բնակիչները չեն դժգոհում «աղմուկից»:

6



Բենուա Մորբեյի բարձրախոս քանդակները

Այս տեսակի ձայնային քանդակի առաջին օրինակը կարելի է համարել Բենուա Մորբեյի 1987-ին Ֆրայբուրգում ստեղծված Speaker Container ինստալյացիան «Արվեստը կոնտեյներում» ցուցահանդեսի համար: Աշխատանքն իրենից ներկայացնում էր բեռնափոխադրող կոնտեյներ, որն ամբողջությամբ ծածկված էր բարձրախոսներով, որոնք միացված էին հեռախոսային զծին և ինքնապատասխանիչին: Այստեղ բարձրախոսներն օգտագործված էին որպես քանդակի հիմնական նյութ: Այլ օրինակներում բարձրախոսը պարզապես կցված է հիմնական քանդակին, ինչպես, օրինակ՝ 1991 թվականին Ռիգայում նույն հեղինակի կողմից ստեղծված Speakers Monument-ը, որտեղ քանդակի հիմքն արդեն վաղուց գոյություն ունեցող Ստալինյան հուշարձանն էր: Հաճախ բարձրախոսները կցվում են ոչ միայն արդեն գոյություն ունեցող քանդակներին, այլև ճարտարապետական կառույցներին և այս դեպքում աշխատանքի վերջնական տեսքը թելադրում է կառույցը, ինչպես, օրինակ, Բեռլինյան պատի մի հատվածի հիման վրա 2011 թվականին ստեղծված Speakers Wall-ի պարագայում:



7

Բարձրախոս քանդակի մի օրինակ էլ Երևանում

Ալեք Մանուկյան 5 հասցեում է գտնվում քանդակագործ Դավիթ Մինասյանի հեղինակած «Հնչող արձանը» (2016թ.): Արձանը խորհրդանշական է: Այն նվիրված է Հայաստանի Հանրային հեռուստատեսության 60 և Հայաստանի հանրային ռադիոյի 90-ամյակին: Այն ռադիո ունկնդրող և կամ հեռուստացույցի շուրջ հավաքված ընտանիքի ալեգորիա է, որին կցված բարձրախոսից հնչում է երաժշտություն, երբեմն էլ՝ Հանրային ռադիոյի ուղիղ եթերը: Երաժշտության կամ հաղորդման առկայությունը էլ ավելի է ընդգծում բարձրախոս-քանդակի՝ հանրային տարածքը սոցիալիզացնելու գործառույթը: Մինչ ականջակալները մարդկանց կտրում են շրջակա աշխարհից, բարձրախոսները, ընդհակառակը, ստիպում են միանալ կոլեկտիվ հայեցման պրոցեսին, լինել այստեղ և հիմա՝ պահանջելով ամբողջական ֆիզիկական և մտավոր ներկայություն:




Լսեցե՛ք, լսեցե՛ք, խոսում է Երևանի լայնահաղորդ կայանը



↑ Վերջին լուրերի խմբագրություն, 1950-ականներ

Հայաստանի հանրային ռադիոյի երկար տարիների աշխատակից, «Արևիկ» ժանկապատասեկան ալիքի ղեկավար Ասրինե Գևորգյանն ուսուցանասիրել է պերական արխիվն ու ծեղ պատմել հեռախօսի փաստեր հայկական ռադիոյի պատմութունից:



→ Ինտերկադր հյուանդոցի (ազ ծասում) 4-րդ հարկում էր աշխատում Հայաստանի ռադիոն, 1920-ականներ



Առաջին ռադիոկայանը ճայնային չէր

Առաջին պետական ռադիոկայանը Հայաստանում հիմնվել է Առաջին հանրապետության տարիներին: Պատմությանը հայտնի «Մարկոնի» տիպի «ուժեղ ռադիոկայանը» գնվեց Թիֆլիսում և Երևան տեղափոխվեց 1919 թվականի ապրիլի 28-ին: Այն ձայնային չէր՝ կիրառվում էր ռադիոհեռագրեր ուղարկելու համար: Կառավարության որոշմամբ ռադիոկայանը տեղակայվեց Երևանի երկաթուղային կայարանի վարչական շենքում և հանձնվեց Զինվորական նախարարությանը գավառների և այլ պետությունների հետ շուրջօրյա կապ հաստատելու համար: Պետական արխիվում պահվող փաստաթղթերից տեղեկանում ենք, որ ռադիոկայանն ուներ 9 կիլովատ և 17 ամպեր հզորություն, լրատվություն կարող էր ուղարկել մինչև 1000 վերստ: Այս ռադիոկայանի միջոցով նույնիսկ Հովհաննես Թումանյանը Թիֆլիսից 1921 թվականի Փետրվարյան հեղաշրջման խժոժությունների ժամանակ դիմեց հայ ժողովրդին հուսալով կանխել եղբայրասպան պատերազմը: Ռադիոկայանն Առաջին հանրապետությանը ծառայեց մինչև վերջ՝ 1920-ի նոյեմբերը: Իսկ ղեկավարների 2-ից Խորհրդային Հայաստանի ղեկավարությունն այն ծառայեցրեց իր նպատակներին:

Առաջին չայնային հաղորդումը փետրվարի 25 թույն

1925 թվականին Երևանում հանրապետական նշանակության ուղիովայան հիմնվեց։ Ռադիոֆիկացման քարտեզի ստեղծումից և ռադիոաշտարակի կառուցումից հետո, 1926 թվականի սեպտեմբերի 1-ին հանրապետական նշանակության պետական ռադիոկայանը երկաթուղային կայարանի վարչական շենքից եթեր հեռարձակեց 25 ռոպե տևողությամբ առաջին փորձնական ռադիոհաղորդումը։ Ընդմիջելով երաժշտությունը՝ հաղորդավար Սուրեն Քանանյանը մի քանի անգամ հայտարարել է «Լսեցե՛ք, լսեցե՛ք, խոսում է Երևանի լայնահաղորդ կայանը» բառերն ու հաղորդել տեղական նշանակության մի քանի լուր։

→ Երևանի հին կայարանի շենքը, որպես ռադիո անգամ հնչել է. «Լսեցե՛ք, լսեցե՛ք, խոսում է Երևանի լայնահաղորդ կայանը»



Հաղորդումներն ուղիղ եթերում էին

1920-ականներին Երևանում մեծ բարձրախոսներ տեղադրվեցին։ Երաժշտություն և լրատվություն էր հաղորդվում այգիներում, քաղաքի տարբեր մասերում։ Եթերը բաղկացած էր փոքր լրատվական բլոկից և երաժշտությունից, ընդ որում, այդ ժամանակ հաղորդումները չէին ձայնագրվում, ուղիղ էին հեռարձակվում։ Արևելյան անսամբլն ու տարբեր երգիչներ ուղիղ հեռարձակմամբ էին եթեր դուրս գալիս։ Իհարկե, եղել են նաև վրիպումներ, չէ՛ որ հաղորդավարներն օժտված չեն եղել հաղորդավարական հմտություններով, գրեթե բոլորը տեխնիկական աշխատողներ էին. ամեն բան դեռ նոր էր սկսվում։ Պարբերական հեռարձակումները սկսվեցին 1927-ից։ Ռադիոյի ընդլայնման արդյունքում անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար «Անդրփոստ-հեռժողկոմատի» տրամադրած 700 ռուբլիով ռադիոն տեղափոխվեց «Խնտուրիստ» հյուրանոցի վերջին հարկ։ Այստեղ հասկացված չորս սենյակում Երևանի ռադիոն շարունակեց իր աշխատանքները։ Այն իրական բոհեմական վայր էր, որտեղ հավաքվում էին ժամանակի մտավորականները։ Արդեն 1929 թվականից հաղորդումները սկսեցին վարել առաջին հաղորդավարներ Վերգինե Բաբայանն ու Սուրեն Քանանյանը։

↓ 1936-ին ռադիոն փոխափոխվեց փոստի շենք, Լենինի հրապարակ



Ռադիոն կրթում էր

1920-ականներին ժողովրդի մեծ մասն անգրագետ էր։ Ահա թե ինչ արեցին ռադիո մարդիկ՝ բացեցին «ռադիո համալսարաններ», պատրաստեցին հաղորդումներ, որոնք հայտնում էին զիտական նորություններ և արժարժում կրթական թեմաներ։ Ստեղծվեցին նույնիսկ հաղորդումներ հատուկ կանանց համար։ Դրանք լուրջ դաստիարակչական բնույթ էին կրում։ Ռադիոն ամենաարագահասն ու ամենագրավիչն էր այդ շրջանի բոլոր տեղեկատվական միջոցներից։ Մարդիկ աստիճանաբար սկսեցին ավելի տեղեկացված լինել ռադիոյի միջոցով և ինչ-որ առումով այն օգնեց մարդկանց իրենց համար կյանքի ճանապարհ ընտրել։ Մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմն այդ ռադիո համալսարանները շատ տարածված էին։

Պատերազմի ժամանակ ռադիոյով ընթերցում էին «Վարդանանիք»


«1941 թվականի հունիսի 22-ի լուսադեմին գերմանական բանակի կանոնավոր զորքերը գրոհեցին մեր սահմանապահ զորամասերի վրա Բալթիկ ծովից միջև Սև ծով ձգված ճակատում...»։ Հայկական ռադիոն այս լուրը հայտնեց նույն օրը՝ ժամը 12:00-ին։ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին ռադիոն բացառիկ դեր է ունեցել մարդկանց կյանքում։ Որոշակի ժամերի մարդիկ հավաքվում էին բարձրախոսների շուրջ ու սպասում, թե ինչ լուր կա ռազմաճակատից։ Բացի այդ՝ եղել են ռազմաճակատային լրագրողներ, որոնք հենց տեղում ձայնագրել են հայ մարտիկներին ու նրանց խոսքը հասցրել հայրենիք։ Ռադիոյով ընթերցվում էին նաև ռազմաճակատից ուղարկված նամակներ, որոնք իրենց բովանդակությամբ հուսադրող և լավատեսական էին։ Չկար հեռուստատեսություն, չկային ժամանցի վայրեր, հնգամյա պատերազմ էր, ծանր աշխատանք կատարող կանայք, սովահար երեխաներ. այս ամենի մեջ ռադիոն ամենաաղրական բանն էր։ Սովինֆորմբյուրոն ստեղծվեց հենց այդ տարիներին։ «Ռադիո Մոսկվայից» ուղարկվող լուրերը շատ արագ էջ առ էջ թարգմանվում և ընթերցվում էին հաղորդավարների կողմից, ովքեր աշխատում էին ավտոմատներով զինված զինվորականների վերահսկողության ներքո։ Կարդում էին նաև «Վարդանանքն» ու այլ պատմավեպեր՝ ռազմահայրենասիրական ոգին բարձր պահելու նպատակով։ 1945թ. մայիսի 2-ին ժ. 14:15 ժամին ռադիոն հայտնեց երկար սպասված լուրը. «Խորհրդային զորքերը գրավեցին հիտլերյան Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինը...»։ Հետագայում հաղորդավարների մեջ վեճեր էին, թե ով է հայտնել պատերազմի ավարտի բաղձալի լուրը։

Ռադիոն հասնում էր սիյուռիին

1947-ին ստեղծվեց Սիյուռի հետ կապերի խմբագրությունը: Դա մի իսկական հեղաշրջում էր: Առաջին հաղորդումը եթեր հեռարձակվեց սեպտեմբերի 10-ին ժամը 19:00-ին: Առաջին անգամ տարբեր երկրներում գտնվող հայերը լսեցին հայկական ռադիոյի ձայնն ու հոնգուր-հոնգուր լաց եղան: Եղեռնից փրկված ու տարբեր երկրներում հանգրված գտած հայերից շատերը կարծել էին, թե Հայաստանն այլևս չկա: Եվ ահա եթեր է հեռարձակվում «Հայրենիքի ձայնը» հաղորդումն ու հնչում են Հրաչունհի Ջինանյանի, Վահրամ Փափագյանի և Ավետիք Իսահակյանի ձայները: Իհարկե, բոլոր նյութերը միևնույն է ենթարկվում էին գրաքննության, այնուամենայնիվ, դա հայկական ռադիոյի իրական վերածնունդ էր: Այդ ու հետագա տարիներին Հայաստանի ռադիոն հազարավոր նամակներ էր ստանում սիյուռից՝ Լիբանանից, Իրանից, Սիրիայից, Քուվեյթից, Եգիպտոսից, Ֆրանսիայից, Հունաստանից և այլ երկրներից: Դրանք այսօր էլ պահպանվում են մեր արխիվներում:




↑ Ռադիոյան շենքի մանրակերպը




Հայկական ռադիոն չէր ծոռանում սպգային փոխադասնություններին

Հայկական ռադիոն աշխարհում առաջինն էր, որ հաղորդումներ պատրաստեց քրդերի համար դեռ 1954 թվականին: Մոտ 10 տարի առաջ ազգությամբ քուրդ Օսման Բայրեմիրը, որ Դիարբեքիի քաղաքապետն է եղել, Հանրային ռադիոյի շենք մտնելուն պես համբուրեց ռադիոյի դռնն ու պատերը: Ավելի ուշ Բայրեմիրը պարզաբանեց՝ ասելով, որ ունեցել է երկու մայր. իր կենսաբանական մայրն ու հայկական ռադիոն, որի շնորհիվ նա ծանոթացել է քրդական մշակույթին, քրդական երաժշտությանն ու լեզվին:



↑ Ռադիո կայանը վերականգնելու մասին դեկրետը, 1920թ.

↓ Վիկտոր Համբարձումյանը, Մարտիրոս Սարյանը, Դերենիկ Դեմերձյանն ու Ավետիք Իսահակյանը հաճախ էին հյուրընկալիւմ ռադիոյում



Ռադիոյան աշտարակը չկառուցվեց, խանի որ «եռիսություն» էր

1950-ականները նշանավորվեցին նրանով, որ շահագործման հանձնվեց այն ժամանակվա լավագույն տեխնիկայով ու սարքավորումներով հագեցած Ռադիոտան շենքը: Իհարկե ճարտարապետ Հովհաննես Մարգարյանի ոչ բոլոր մտահղացումներն իրականություն դարձան: Ռադիոտան աշտարակը, որը պարզ երևում է Էսբիզներում, այդպես էլ չկառուցվեց, քանի որ 1955-ին խորհրային կառավարությունը հրամանագիր ստորագրեց «ճարտարապետական ավելորդությունների դեմ պայքարի» մասին և այդ աշտարակը, որը նաև ռադիոաշտարակի ֆունկցիա պիտի կատարեր, դուրս մղվեց նախագծից:

↑ Ֆրանսիայից եկած հյուրերը եկել են Ռադիո ծանոթանալու Հայկական ռադիոյի անեկտրոնների հեղինակի հետ



← Վիլյամ Սարգսյանը՝ Ռադիոյի լրագրողների և աշխատակիցների հետ, 1978թ.

↓ Նարինե Գևորգյանը



Մանր ռադիո ունենալը պարտադիր էր

Խորհրդային տարիներին բնակարանաշինական նախագծերում հատուկ նշվում էր ռադիոգծի անցկացումը բնակարանի բոլոր սենյակներում: Դա պարտադիր էր: Սակայն 1986 թվականին Հայաստանի ռադիոկոմիտեն վերանվանվեց Հայաստանի հեռուստառադիոյի կոմիտեի: Հեռուստատեսությունը, խլելով եթերային լավագույն ժամերը, զանգվածային լրարանի գերակշիռ մասն ու հաղորդավարներից շատերին, ռադիոն բնակարանների բոլոր սենյակներից տեղափոխեց խոհանոց:



↓ Ռադիոյունն այսօր

Ռադիոն ունի հսկայական արխիվ

1956 թվականին հիմնադրվեց Ֆոնդային ձայնագրությունների խմբագրությունը: Շենքի նկուղային հարկում ձայնադարանին նոր տարածք հատկացվեց: Ստեղծվեցին տեխնիկական պայմաններ՝ ձայնագրությունների երկարատև պահպանման համար՝ խոնավություն, ջերմաստիճան, անվտանգություն և այլ պահանջներ: Այժմ ձայնադարանն ունի 117,000 ձայնագրություն, որոնցից 27,000-ը հայկական են:

Հայկական ռադիոն դարձավ անեկդոտների հերոս

1960-ականներին Հայկական ռադիոն նոր կերպար է ստանում իր անեկդոտներով: 1950-60-ական թվականներին եղել է մի հաղորդում, որը պատասխանել է ռադիոլսողների հարցերին: Այդտեղից էլ ռադիոյին ուղված տարբեր հարցերի հումորային պատասխանների հաղորդման միտքն առաջ եկավ: Շատ շուտով ամբողջ աշխարհում հայտնի դարձան հայկական ռադիոյի անեկդոտները (եվրոպայում ասում են «Ռադիո Երևան»): Ռադիոյի լրագրողները, տնօրենները, բոլոր այն մարդիկ, ովքեր հայտնվում էին արտասահմանում և ներկայանում էին ասելով, որ հայկական ռադիոյից են, արժանանում էին կամ բարձր ծափահարությունների, կամ ի պատասխան լսում էին բարձր ծիծաղ:

📻 Համիկ Բադխտաբյան
📺 Հայաստանի հանրային ռադիոյի արխիվ





Ռադիո հաղորդումների ծրագիր, ապրիլ 1936 թ.

«Լսեցե՛ք, խոսում ե Յերեվանը» (հին ուղղագրությամբ) բրոշյուրի միջոցով կարելի է պատկերացում կազմել 1930-ականներին հայկական ռադիոյի հաղորդումների մասին: «Հաղորդման տախտակը» բաժանվում էր մի քանի հիմնական բաժինների՝ երաժշտական (խորհրդային ազգերի երաժշտություն, թեթև երաժշտություն, գրամաֆոնային համերգ, հեղափոխական երաժշտություն, համերգ՝ նվիրված զարնանացանին և այլն), գրական-դրամատիկական (Բակունց «Խոսում են Ջավլույի բնակարանից», Հ. Պարոնյան «Պաղտասար աղբար», հատված «150,000,000» պոեմից (թուրքերեն), Սուլեյման Ռուստամ «Ստալինի անվան տվյալում»), մանկական (Երեխաներին՝ Լենինի մասին, համերգ-ծրագիր հեղափոխական երաժշտություն՝ նվիրված մայիսյան և տոնին, կենսուրախ պար երաժշտություն փոքրահասակ դպրոցականների համար), զեկուցումներ (տրամալսուցիչ Կառույցի ստախանովսկյան Բագրատ Թադևոսյանի բնակարանից, Երևանի կարի գործարանի աշխատանքների մասին), ինքնակրթություն (Խոզերի ժանտախտը և նրա դեմ պայքարելու միջոցները, Ճապոնիա, տեխնիկա-տնտեսագիտական բյուլետեն), կուս հեռակա ուսուցում (ինչպես է կառուցված բոլշևիկների կուսակցությունը, ընթացիկ քաղաքական մոմենտին վերաբերող դասախոսություն, ագրարային գյուղական հարցը բոլորուղեմոկրատական և պրոլետարական հեղափոխությունների մեջ):

Յերեվանի ռադիոյի ծրագիր	
2-ին	
19.45—20.00—Երեվանի աստիճանի զարնանային ծրագրում (Լուսինյան)	
3-ին	
22.50—23.00—Մուստաֆա Կալմախյանի ծրագրում (Կալմախյան)	
4-ին	
19.45—20.00—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
8-ին	
19.45—20.00—Նավթյան ծրագրում (Նավթյան)	
9-ին	
22.50—23.00—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
10-ին	
19.45—20.00—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
14-ին	
19.45—20.00—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
15-ին	
22.50—23.00—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
16-ին	
19.45—20.00—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
20-ին	
19.45—20.00—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
21-ին	
22.50—23.00—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
22-ին	
19.45—20.00—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
26-ին	
19.45—20.00—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
27-ին	
22.50—23.00—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
28-ին	
19.45—20.00—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	


Գրական-դրամատիկական	
3-ին	
20.00—20.50—Գրական-դրամատիկական ծրագրում (Գրական-դրամատիկական)	
6-ին	
19.45—20.00—Գրական-դրամատիկական ծրագրում (Գրական-դրամատիկական)	
7-ին	
21.20—22.00—Գրական-դրամատիկական ծրագրում (Գրական-դրամատիկական)	

14-ին	
19.25—19.40—Լամար—Երեվանի ծրագրում (Երեվանի)	
20.20—20.50—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
21.20—22.30—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
15-ին	
19.25—19.40—Լամար—Երեվանի ծրագրում (Երեվանի)	
21.20—22.30—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
16-ին	
19.25—19.40—Լամար—Երեվանի ծրագրում (Երեվանի)	
20.00—20.50—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
21.20—22.30—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
17-ին	
19.25—19.40—Լամար—Երեվանի ծրագրում (Երեվանի)	
20.00—20.50—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
21.20—22.30—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
22.50—23.40—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
18-ին	
12.00—13.00—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
19.20—20.00—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
19-ին	
20.00—20.50—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
21.20—22.30—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
20-ին	
19.25—19.40—Լամար—Երեվանի ծրագրում (Երեվանի)	
20.00—20.50—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
21.20—22.30—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
22.50—23.40—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
21-ին	
19.25—19.40—Լամար—Երեվանի ծրագրում (Երեվանի)	
21.20—22.30—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
22-ին	
19.25—19.40—Լամար—Երեվանի ծրագրում (Երեվանի)	
20.00—20.50—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
21.20—22.30—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	
22.50—23.40—Մարտի 1-ինի ծրագրում (Մարտի 1-ին)	



evnmag.com

Կարդայե՛ք առջա՛նը



Էլ ավելի շատ ինտերնետ
և ալիքներ Ձեր տանը



մինչև
120
ՄԲ/վ

մինչև
195
TV ալիք

uMix

XS S M L

u!com[®]

մանրամասների համար՝
www.ucom.am